

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 1**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ջենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетыан** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

**ISSN 1829-2771**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Էդիկ Մինասյան</b> – ՅՄՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՅԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.).....	8
<b>Эдик Минасян</b> – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).....	32
<b>Edik Minasyan</b> – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).....	33
<b>Արտակ Մովսիսյան</b> – ՅՄՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ).....	34
<b>Артак Мовсисян</b> – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА).....	40
<b>Artak Movsisyan</b> – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO).....	40
<b>Միքայել Մալխասյան</b> – ՄԵԾ ՅԱՅՔԻ ԱՐԵՎՍՅԱՆ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՐՈՍԵՆՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ».....	41
<b>Микаэл Малхасян</b> – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.....	47
<b>Mikayel Malkhasyan</b> – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY’S “GEOGRAPHY”.....	47
<b>Էդգար Վարշամյան</b> – ՅՄՅԱՍՏԱՆԸ ՅՈՒՍԵՎ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	49
<b>Эдгар Варшамян</b> – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.....	60
<b>Edgar Varshamyan</b> – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.....	61
<b>Արգիշտի Վարդանյան</b> – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՅԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱԿԱՐԻՉ.....	62
<b>Аргисhti Варданян</b> – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.....	68
<b>Argishti Vardanyan</b> – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.....	68
<b>Արման Եղիազարյան</b> – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ.....	70
<b>Арман Егиазарян</b> – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.....	79
<b>Arman Yeghiazaryan</b> – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.....	79
<b>Արարատ Ստեփանյան</b> – ՓԻԼԱՐՏՈՍ ԿԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏԿԱՏԻՏՐՈՍՆԵՐԸ.....	81
<b>Арарат Степанян</b> – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.....	86
<b>Ararat Stepanyan</b> – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.....	86

<b>Սեյրան Չաքարյան</b> – ԱՉԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԵՎ ՂԱԶԱՐ ԶԱՅԿԵՑԻ).....	88
<b>Сейран Закарян</b> – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).....	97
<b>Seyran Zakaryan</b> – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSİ).....	98
<b>Սարգիս Բալդարյան</b> – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....	99
<b>Саркис Балдарян</b> – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.....	106
<b>Sargis Baldaryan</b> – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA. ....	106
<b>Արարատ Հակոբյան</b> – 1920 Թ. ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐԿԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ).....	108
<b>Арарат Акопян</b> – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).....	117
<b>Ararat Hakobyan</b> – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).....	117
<b>Նելլի Մինասյան</b> – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՍԱԹՅՈՒՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	118
<b>Нелли Минасян</b> – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.....	123
<b>Nelli Minasyan</b> – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.....	123
<b>Սուրեն Ավետիսյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՃ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	124
<b>Сурен Аветисян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	131
<b>Suren Avetisyan</b> – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.....	131
<b>Առնակ Սարգսյան</b> – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԱԿԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	132
<b>Арнак Саргсян</b> – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).....	139
<b>Arnak Sargsyan</b> – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).....	139
<b>Գայանե Թովմասյան, Ռուբիկ Թովմասյան</b> – ՉՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ).....	140
<b>Гаяне Товмасян, Рубик Товмасян</b> – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.....	149

**Gayane Tovmasyan, Rubik Tovmasyan – FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.** ..... 149

**Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՆՆԱ-ՑԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ** ..... 150

**Аршалуys Тетейан – ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.** ..... 156

**Arshaluys Teteyan – RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.** ..... 156

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՌՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀԱՎԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱԿՈՐ ԱՐՔԵՈՒՐՆԵՐԻ)** ..... 157

**Рафик Наапетян – АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).** ..... 162

**Rafik Nahapetyan – ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).** ..... 162

**Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ** ..... 163

**Кристина Айвазян – БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.** ..... 174

**Christina Ayvazyan – CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.** ..... 175

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

**Գեղամ Ասատրյան, Ավետիս Գրիգորյան – ՄԱՔՐԱՎԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.)** ..... 176

**Гегам Асатрян, Аветис Григорян – ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.)** ..... 181

**Gegham Asatryan, Avetis Grigoryan – THE CROSSLINES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).** ..... 181

**Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵՎԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ** ..... 185

**Монте Матевосян – ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.** ..... 188

**Monte Matevosyan – THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.** ..... 188

**Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱԴԵՍԻ Հ<sup>մ</sup> 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 191

**Шушаник Амбарян – РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.** ..... 199

**Shushanik Hambaryan – № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.** ..... 199

**ՍՓՅՈՒՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Հրածին Վարդանյան** – ՍՓՅՈՒՌԻ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՐԸ..... 202  
*Грацин Варданян – ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* ..... 207  
*Hratsin Vardanyan – TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* ..... 208

**Ալիկ Ղարիբյան, Գայանե Գալստյան** – ՀՅԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՍԿԶԲԱԿՈՒՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ..... 209  
*Алик Гарибян, Гаяне Галстян – НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТИОН В США.* ..... 214  
*Alik Gharibyan, Gayane Galstyan – THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* ..... 215

**Էդգար Հովհաննիսյան** – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՒ ՎԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱԴՊՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 216  
*Эдгар Ованесян – СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* ..... 225  
*Edgar Hovhannisyanyan – THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.*..... 225

**Մարիամ Հակոբյան** – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ..... 226  
*Мариам Акопян – ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* ..... 231  
*Mariam Hakobyan – THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.*..... 231

**Նարինե Նուշերվանյան** – «ՍՓՅՈՒՐԸ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՄԱԶԵՎ ՍՈՂԵԼԸ..... 232  
*Нарине Нушерванян – ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ “ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА”*..... 240  
*Narine Nushervanyan – “DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND” TRIANGULAR MODEL OF RELATIONS.*..... 241

**Գևորգ Ղուկասյան** – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԻ ԼՈՐԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ..... 242  
*Геворг Гукасян – О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* ..... 250  
*Gevorg Ghukasyan – ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.*..... 251

**ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES**

**Հայկազ Հովհաննիսյան, Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՑ ՎԱԿԵՐԱԳՐԵՐ ԼԱՁԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ ..... 252

*Այկազ Օգանեսյան, Կարեն Բայրամյան – НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* ..... 261

*Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan – NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* ..... 261

**Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ԼԱՍԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** ..... 262

*Օւիւկ Գրիգորյան, Այկ Մխոյան – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* ..... 273

*Hovik Grigoryan, Haik Mkhoyan – FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* ..... 274

**ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

**Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԵՆՆԻՇՆԵՐ)** ..... 275

*Արա Օգանեսյան – УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* ..... 281

*Ara Hovhannisyan – EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* ..... 282

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

**Վարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX-НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С.** ..... 283

**Էդիկ Մինասյան, Էդիկ Չոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻՉԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷԶ** ..... 286

**Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՄՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ / ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ /, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷԶ** ..... 288

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 290

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 292

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 294

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 294

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### Էդիկ Մինասյան

#### ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.)

*Հիմնաբառեր.* Արևմտյան ռազմաճակատ, Խորհրդրդային Միության հայ հերոսներ, թիկունքի աշխատողներ, ազգային դիվիզիաներ, Թամանյան դիվիզիա, Խորհրդային Միության մարշալներ, ծովակալ Իսակով, Խորհրդային Միության կրկնակի հերոս, օդաչու Նելսոն Ստեփանյան, պարտիզանական և դիմադրական շարժում:

#### ՄՈՒՏԸ. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԻՉԲԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին երկու տարիներին՝ 1939-1941 թթ., նախատական Գերմանիան իր դաշնակիցների՝ Ճապոնիայի և Իտալիայի աջակցությամբ զավթել էր գրեթե ողջ Եվրոպան, նաև խոշոր տարածքներ Ասիայում ու Աֆրիկայում: 1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկվայում ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքվել էր 10 տարվա չհարձակման պայմանագիր: Չնայած այս պայմանագրին՝ Ա. Հիտլերը գաղտնի նախապատրաստվում էր ԽՍՀՄ-ի վրա հարձակվելուն: Այդ նպատակով 1940 թ. դեկտեմբերի 18-ին նա հաստատեց ԽՍՀՄ-ի դեմ կայծակնային պատերազմի ծրագիրը, որը ստացավ «Բարբարոսա» անվանումը: Ըստ այդ ծրագրի՝ նախատեսվում էր արդեն շուրջ երկու տարի հաջողությամբ կիրառվող մարտավարությամբ՝ գերազանց սպառազինված և շարժունակ խմբավորումների անակնկալ ու սրընթաց գործողություններով, արագորեն մասնատել ու ոչնչացնել ԽՍՀՄ արևմտյան սահմանագոտում տեղակայված զորքերը, շուրջ երկու ամսվա ընթացքում ջախջախել Կարմիր բանակի հիմնական ուժերը, ոչնչացնել Խորհրդային Միության արդյունաբերական կենտրոնները՝ հասնելով հաղթանակի: Այդ նպատակով գերմանական հրամանատարությունը ԽՍՀՄ սահմանի մոտ կենտրոնացրել էր լավ սպառազինված 190 դիվիզիա, որոնք տեղաբաշխվել էին երեք հիմնական ուղղություններով՝ «Հյուսիս», «Հարավ» և «Կենտրոն»: 1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի հետ կնքած չհարձակման մասին պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Խորհրդային Միության վրա:

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Գերմանիայի դաշնակիցների թիվը ավելացավ ևս մեկով. 1941 թ. հունիսի 18-ին բարեկամության և չհարձակման պայմանագիր կնքվեց Գերմանիայի և Թուրքիայի միջև, որով Գերմանիան հնարավորություն էր ստանում օգտագործելու Թուրքիայի ցամաքային և ծովային տիրույթները: Գերմանական ռազմաճակատները իսկույն ներխուժեցին Սև ծով և ընդհուպ մոտեցան ԽՍՀՄ ծովափնյա շրջաններին: Փաստորեն՝ ամեն բան պատրաստ էր ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ սանձազերծելու համար:

Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ բարեկամացած Թուրքիային, ապա դժվար չէր հասկանալ, թե այդ դեպքում ինչ էր սպասվում Հայաստանին ու հայ ժողովրդին: Հայոց ցեղասպանությունը իրականացրած Թուրքիան անմիջապես խոշոր ռազմական ուժեր՝ 26 դիվիզիա էր կենտրոնացրել Խորհրդային Հայաստանի սահմանի մոտ և հարմար պահի էր սպասում՝ այնտեղ ներխուժելու համար<sup>1</sup>:

#### ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Դեռևս Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին, Օբերգալցբուրգում Երրորդ Ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամա-

\* Հոդվածը ներկայացվել է 12.05.2020 թ., գրախոսվել՝ 25.05.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:  
<sup>1</sup> Տե՛ս Штеменко С., Генеральный штаб в годы войны, М., 1968, с. 54.



նակ, Ա. Յիտլերը ցուցում էր տվել իր զորավարներին առաջիկա պատերազմում անխնա բնաջնջելու սլավոնական ժողովուրդներին՝ ուշադրություն չդարձնելով հասարակական կարծիքի վրա, հիշեցնելով, թե «մեր ժամանակներում այլևս ո՞վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»<sup>1</sup>: Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, հիշելով և վերապրելով առաջին համաշխարհային պատերազմում գերմանա-թուրքական ռազմական դաշինքի արդյունքում իրականացված Հայոց ցեղասպանության փաստը և յուրացնելով այդ վայրենի սպանդի դասերը, գիտակցվելով, թե իր համար ինչպիսի վտանգ կարող էր առաջանալ Գերմանիայի հաղթանակի դեպքում, ոտքի կանգնեց՝ պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցելով մարտական գործողություններին ռազմաճակատի բոլոր հատվածներում՝ հեռավոր Մուրմանսկից մինչև Մերձբայթիկա, ԽՍՀՄ արևմտյան սահմաններով դեպի հարավ՝ մինչև Օդեսա և Ղրիմ: Հայ մարտիկները Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների շարքում մարտնչում էին զինվորական բոլոր շրջանների և ռազմաճակատների տարբեր զորատեսակների կազմում: Նրանք մեծ ներդրում ունեցան Երկրորդ համաշխարհային պատերազմի, այդ թվում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում: 1941 թ. օգոստոսի 25-ին «Правда» թերթը «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում նշված է. «Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, նա գիտե, ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազակերպել էր արյունռուշտ Յիտլերի նախորդ Վիլիելմ կայսրը՝ Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել է մարդակեր Յիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»<sup>2</sup>: Այս պատերազմում Հայաստանը, բարեբախտաբար, ռազմական գործողությունների թատերաբեմ չդարձավ: Պատերազմի մահաբեր ալիքը, բախվելով կովկասյան լեռներին, անանցանելի դարձավ ընկրկեց, որով մեր երկիրը զերծ մնաց անխուսափելի թվացող ավերածություններից ու կոտորածից: Բայց, այնուհանդերձ, այն նաև մեր պատերազմն էր, քանի որ անմիջականորեն առնչվում էր նաև մեր ժողովրդի կենսական շահերին, որովհետև նրա մասնակից դարձավ նաև Հայոց ցեղասպանության արդյունքում ձևավորված հայ Սփյուռքը, ողջ աշխարհասփյուռ հայությունը:

Պատերազմի առաջին օրվանից սկսած Հայաստանի պետական և կուսակցական մարմինները, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները, հանրապետական, քաղաքային և շրջանային զինվորական կոմիսարիատները անմիջապես լծվեցին հանրապետության ռազմական կարողությունը գործի դնելու աշխատանքներին: Հանրապետության առջև դրվեցին կարևորագույն խնդիրներ՝ առաջին հերթին ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական հիմունքներով, ապահովել զորահավաքը, կադրեր ընտրել ճակատ մեկնածներին փոխարինելու և թիկունքի աշխատանքն անխափան շարունակելու համար, ապա սկսել բնակչության ռազմական ուսուցումը, աշխարհագրի կազմավորումը, սահմանամերձ շրջաններում պաշտպանական ամրությունների կառուցումը և այլն: Կուսակցական, խորհրդային, վարչատնտեսական մարմինների գործունեության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Մացակ Պապյանը և ՀԽՍՀ ժողովմխորհի նախագահ Արամ Փիրուզյանը<sup>3</sup>: Կենտկոմի քարտուղարներ Աղասի Սարգսյանին, Սուրեն Միքայելյանին, Սահակ Կարապետյանին և Աղասի Չարչոյանին հանձնարարվեց հանրապետության ռազմական կարողությունը գործի դնելու աշխատանքների տարբեր ոլորտների ղեկավարությունը: Մեծ պատասխանատվություն էր դրված նաև Հայաստանի ժողովմխորհի նախագահի տեղակալ և Անդրկովկասյան ռազմաճակատի թիկունքի պետի տեղակալ Ռուբեն Ազիզբեկյանի, Հայաստանի կոմկուսի կենտկոմի

<sup>1</sup> *St'u The New York Times, 24 November, 1945.*

<sup>2</sup> «Правда», 25 августа, 1941.

<sup>3</sup> *St'u Арутюнян К., Погосян Г., Вклад Армянского народа в победу в великой отечественной войне (1941-1945), Е., 2010, с. 59.*

ռազմական բաժնի վարիչ Աշոտ Մկրտչյանի և հանրապետության զինվորական կոմիսար Գարեգին Ասատրյանի վրա<sup>1</sup>:

ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հունիսի 22-ի զինապարտության մասին հրամանագրով բանակ էին զորակոչվում 1905-1918 թթ. ծնված զինապարտները, այնուհետև զորակոչվել են 1919-1925, մասամբ 1926 թ. ծնված զինակոչիկները<sup>2</sup>: Չորահավաքն ընթանում էր կազմակերպված ձևով զորակոչիկների ու նրանց ընտանիքի անդամների բարձր հայրենասիրության պայմաններում: Մեծ թվաքանակ էին կազմում կամավոր կերպով ռազմաճակատ մեկնել ցանկացողները: Ըստ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կլիմենտ Յարուբյունյանի հաշվարկների 1941-1945 թթ. բանակ են զորակոչվել 22 տարիքային հասակի զորակոչիկներ, որոնց ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 286 հազար մարդ<sup>3</sup>: Բանակում քիչ թվաքանակ չէին կազմում նաև ավելի մեծ տարիք ունեցող (1895-1904 թթ.) ծնված զինծառայողները (մոտավորապես 10 հազար): Ավելացնելով նաև նախապատերազմյան տարիներին բանակ զորակոչվածներին (1938-1940 թթ.) որոնց թվաքանակն ըստ ՀՀ զինվորական կոմիսարիատի տվյալների կազմել է 28384 մարդ, ըստ նրա հաշվարկների ստացվում է, որ Հայրենական մեծ պատերազմին Հայաստանից մասնակցել են 324384 մարդ (շուրջ 300 հազարը՝ հայ)<sup>4</sup>: Որոշ հաշվարկներով միութենական այլ պետություններից պատերազմին հայ մասնակիցների թիվը մոտավորապես կազմել է 200 հազար մարդ: Դա նշանակում է, որ Հայրենական մեծ պատերազմին ԽՍՀՄ-ից մասնակցել է շուրջ 500 հազար հայ<sup>5</sup>: Եթե սրան ավելացնենք սփյուռքից մասնակցած 100 հազար հայերին, կստացվի որ երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցել են 600 հազար հայեր, որից 200 հազարը զոհվել են: Ընդհանուր առմամբ Խորհրդային Հայաստանից բանակ զորակոչվածները կազմել են հանրապետության բնակչության (1,4 մլն մարդ, 1941 թ.) 23 %-ն այն դեպքում, երբ ԽՍՀՄ-ի մասշտաբով այս ցուցանիշը կազմում էր 18 %, այն է՝ 200 մլն բնակչից (1941 թ.) 34,5 մլն զորակոչված<sup>6</sup>:

Գաղտնիք չէ, որ մյուս հանրապետություններում, հատկապես Ադրբեջանում և Վրաստանում, հայերը ուղղակի քաղության նոխազի դեր են ունեցել և հաճախ ազերիների ու վրացիների փոխարեն զորակոչվել: Այդ հանրապետություններում զորակոչված հայերի թիվը անհամեմատ մեծ է եղել՝ նրանց ընդհանուր քանակի հետ տոկոսային հարաբերակցության մեջ վերցրած: Խորհրդային ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից ետ չեն մնացել նաև կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, լուսավորության, առողջապահության, արվեստի, մշակույթի, գրեթե բոլոր բնագավառներում, խորհրդային տնտեսություններում փոխարինել են տղամարդկանց, այլև համարել են բանակի շարքերը՝ իրենց մեծ լուրման ներդնելով հաղթանակի գործում: Տղամարդկանց հավասար նրանք ծառայության են անցել՝ մարտական բոլոր դժվարությունները հաղթահարելով, նրանց հետ միասին հասել են մինչև վերջնական հաղթանակ, մինչև Բեռլին: «...Երբեք ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, – ասել է գեներալ Չոյկովը»<sup>7</sup>:

Երկրորդ աշխարհամարտին և Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են մեծ թվով քաջասիրտ հայուհիներ, ավելի քան 10 հազար հայ կանայք, որոնցից 4 հազարը՝ ՀԽՍՀ-ից, մյուսները՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից և Սփյուռքից<sup>8</sup>: Պատերազմի ամենածանր փորձությունների ժամանակ հայ կանայք բարձր են պահել հայ ժողովրդի դարավոր պայքարի հերոսա-

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>2</sup> *Տե՛ս Յարուբյունյան Կ., Հայ ժողովրդի մասնկացությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945 թթ.), Ե., 2002, էջ 19:*

<sup>3</sup> *Տե՛ս Арутюнян К., Армянский народ в великой отечественной войне (1941-1945), Е., 2018, с. 74.*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 74-75:*

<sup>6</sup> *Տե՛ս Թադևոսյան Ռ. Դրվագներ հայոց ռազմարվեստի պատմությունից, XIX-XX դարեր, Ե., 2012, էջ 420:*

<sup>7</sup> *Чуйков В., Начало пути, М., 1962, с. 261.*

<sup>8</sup> *Տե՛ս Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 420:*

կան ավանդները՝ սրբորեն կատարելով իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Հայրենիքի պաշտպանության համար մղված դաժան պայքարում նրանք ցուցաբերել են բարձր գիտակցություն, հայրենասիրություն և վճռականություն: Համարելով խորհրդային բանակի շարքերը՝ անձնվիրաբար մարտնչել են ֆաշիստական զավթիչների դեմ<sup>1</sup>: Իր չորս հազար տարվա պատմության մեջ հայ ժողովուրդը ամենայն հավանականությամբ առաջին անգամ բանակ զորակոչեց (սակ կամավոր) այդպիսի մեծաքանակ մարդկային ուժեր: Հարկավոր է ընդգծել, որ հայերը ակտիվ մասնակցություն ունեցան բոլոր ռազմաճակատների, գրեթե բոլոր զորատեսակների կազմում և աչքի ընկան քաջագործություններով ու հերոսություններով, մարտնչեցին թշնամու դեմ բոլոր գլխավոր ու հայտնի ճակատամարտերում, ոչ միայն պաշտպանողական, այլև հարձակողական մարտերի ժամանակ: Պատերազմի տարիներին նրանք աչքի ընկան նաև ոչ միայն կրտսեր և ավագ, այլև բարձրագույն հրամանատարական կազմում իրենց ունեցած բարձր տեսակարար կշռով: Ուստի պատահական չէ որ զինվորական հրամանատարական կազմում հայերը ռուսներից, ուկրաինացիներից և բելոռուսներից հետո իրենց թվաքանակով 4-րդն էին (1079)<sup>2</sup>: Հայտնի է նաև, որ Հայրենական մեծ պատերազմին մասնակցած գեներալների թվով նույնպես հայերը չորրորդ տեղում էին թվարկված ազգություններից հետո: Նույն չորրորդ տեղում էին նաև հրետանային զորքերում ունեցած հրամանատարների քանակով ու նաև Ֆրունզեի ռազմական ակադեմիայում սովորող 42 ազգությունների շարքում<sup>3</sup>:

Հայերի ակտիվ ու գրեթե մասսայական մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին ու մարտերում ցուցաբերած սխրագործություններն ու հերոսությունները, մեր կարծիքով մեծավ մասամբ բացատրվում է ոչ միայն նրանց քաղաքացիական պարտքը հայրենիքի հանդեպ կատարելու նրանց պատրաստակամությամբ, այլև ազգային բարձր ինքնագիտակցության աճով պայմանավորված, Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Հայոց ցեղասպանության իրականացման գլխավոր կազմակերպիչ ու իրականացնող հանցագործ Թուրքիայի հավատարիմ դաշնակից ու այդ գործում նրան աջակից ու մեղսագործ Գերմանիայից վրեժ լուծելու անհազ ցանկությամբ, քանզի ամբողջ հայությունն ու նրա մի հատվածը կազմող ցեղասպանության արհավիրք ապրած արևմտահայությունն ու նրանց ժառանգները հասկացել էին, որ նույն գերմանա-ֆաշիստական ուժերին հավատարիմ դաշնակից կարող էր լինել առերևույթ չեզոքություն պահպանող Թուրքիան, որը ձեռքից բաց չէր թողնի հայության նկատմամբ նոր ցեղասպանություն իրականացնելու հնարավորությունը:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՄ

Պատերազմի առաջին ամիսներին հիտլերյան բանակին հաջողվեց գրավել Լատվիան, Լիտվայի զգալի մասը, Արևմտյան Բելոռուսիան և Արևմտյան Ուկրաինայի մեծ մասը: Խորհրդային բանակը հարկադրված եղավ նահանջել երկրի խորքը: Պաշտպանական մարտերը շարունակվեցին մինչև 1941 թ. աշնան ամիսները: Պատերազմի առաջին շրջանում իրագործված ռազմափոփոխության աշխատանքներում կարևոր տեղ է գրավում ազգային դիվիզիաների կազմավորումը: Հայրենական պատերազմի հենց սկզբում կարմիր բանակի կրած կենդանի ուժի հսկայական կորուստները ստիպեցին խորհրդային բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանը թույլատրել սովորական զորամիավորումների կողքին նաև ազգային դիվիզիաների կազմավորումը: Ելնելով անհրաժեշտությունից և նպատակահարմարությունից՝ 1941 թ. նոյեմբերի 13-ին ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեն որոշում ընդունեց կարմիր բանակի կազմում ազգային նոր զորամիավորումներ ստեղծելու մասին<sup>4</sup>: Այդ զորամիավորումները պետք է կազմավորվեին հանրապետությունների նյութական և մարդկային միջոցների հաշվին, որը բավականին կիեշտացներ այդ կարևոր գործը, կրճատելով դիվիզիայի կազմավորման ժամկետները, բարձրացնելով ուսուցման արդյունավետությունն ու որակը: Հայ ժողովրդի 60 հազարից ավելի զավակներ՝

<sup>1</sup> Տե՛ս Մինայան Է. «Հայ հերոսուհի կանայք», Ե., 2016, էջ 341:

<sup>2</sup> Տե՛ս Арутюнян К., Участие Армянского народа в великой отечественной войне (1941-1945), Е., 2010, с. 27-28.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 28:

<sup>4</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Ե., 2002, էջ 200, 201:

պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների շարքերում: Հայրենական մեծ պատերազմում կազմավորվեց հայկական վեց ազգային դիվիզիա, որոնցից մեկը 261-րդը մշտապես գտնվում էր ՀԽՍՀ-ում և չի մասնակցել ռազմական գործողություններին և ոչ միայն պաշտպանում էր խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը, այլև պատրաստում էր երթային գումարտակներ ռազմաճակատի համար: Հայկական առաջին դիվիզիան՝ 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան էր, որը կազմավորվել էր Հայաստանում դեռևս 1920-1922 թթ.: ՀՀ բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման արդյունքում: Այն 1938-1940 թթ. վերակազմավորվել էր որպես ոչ ազգային զինամիավորում, 1941 թ. հունիս-հուլիսին հանրապետության մարդկային ու նյութական միջոցների հաշվին նոր համալրում ստանալով՝ կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը և նույն թվականի սեպտեմբերին մեկնեց ռազմաճակատ: Ըստ դիվիզիայի կոմիսար Անդրեյ Գերվասիևի (հետագայում գեներալ-լեյտենանտ) վկայության՝ դիվիզիայի ավելի քան 16 հազարանոց անձնակազմից շուրջ 14 հազարը կամ 90 տոկոսը հայեր էին: <sup>1</sup> Իրան-Ուկրաինա-Ստալինգրադ-Կուրսկ-Բելոռուսիա-Մերձբալթիկա ահա նման փառավոր մարտական ուղի անցավ 76-րդ (1942 թ. նոյեմբերից, 51-րդ գվարդիական անվանված) Լենինի շքանշանակիր, կարմրադրոշ հրաձգային դիվիզիան:

1941 թ. սեպտեմբերի սկզբին ռազմաճակատում ստեղծված ծանր կացությունը հարկադրեց խորհրդային բարձր հրամանատարությանը Իրանի Թավրիզ քաղաքում գտնվող Հայկական լեռնահրաձգային դիվիզիային հետ կանչել Իրանից և ուղարկել գործող բանակ: Նույն թվականի սեպտեմբերի 27-ից ուկրաինական ԽՍՀ Պոլտավայի մարզում դիվիզիան մարտերի մեջ մտավ թշնամու դեմ և մինչև տարեվերջ ծանր պաշտպանական մարտերը շարունակվեցին նաև Խարկովի ուղղությամբ: 1942 թ. հունվար-ապրիլին դիվիզիան հարավարևմտյան ռազմաճակատի 21-րդ բանակի կազմում մասնակցեց մարտերին, իսկ մայիսի 11-ից Խարկովի հարձակողական գործողությանը, ապա ծանր մարտերով ապահովվեց 21-րդ բանակի նահանջը: 1942 թ. հուլիսի սկզբներին դիվիզիան անցավ Դոն գետի ձախ ափը և հուլիսի վերջերից մասնակցեց Ստալինգրադի ճակատամարտին: Երկարատև ու համառ մարտերից հետո հոկտեմբերի 24-ին դիվիզիայի զորամասերը գրավեցին Դոնի ափին գտնվող Կլետսկայա երկաթուղային կայարանը և ռազմավարական կարևոր հենակետեր ստեղծելով, հերոսական դիմադրությամբ հետ են մղում հակառակորդի բոլոր հարձակումները: Այն մեծ դեր խաղաց խորհրդային զորքերի 1942 թ. նոյեմբերի 19-ի նշանավոր հարձակման ժամանակ, որի արդյունքում նոյեմբերի 23-ին Կալաչ քաղաքից հարավ-արևմուտք ընկած շրջանում Հարավարևմտյան և Ստալինգրադյան ռազմաճակատների զորքերը օղակի մեջ վերցրին Գերմանական 336-հազարանոց խմբավորումը: Այդ գործում իր արժանի ավանդը ներդրեց նաև 76-րդ հրաձգային դիվիզիան, որը ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի հրամանով 1942 թ. նոյեմբերի 23-ին արժանացավ գվարդիական կոչման և անվանվեց 51-րդ գվարդիական Կ. Վորոշիլովի անվան կարմրադրոշ հրաձգային դիվիզիա: Դիվիզիան իր հերոսական դիմադրությամբ կարողացավ խորհրդային մյուս զորամասերի հետ միասին կանգնեցնել Մանշտեյնի տանկային բանակի գրոհներն ու կանխել նրա և գեներալ-ֆելդմարշալ Պաուլյուսի զորքերի միավորման փորձը: 1943 թ. հունվարի 10-ից մինչև փետրվարի 2-ը սկսվեց խորհրդային զորքերի հզոր հարձակումը, որին ակտիվորեն մասնակցեց նաև 51-րդ դիվիզիան և ստիպեց հակառակորդին անձնատուր լինել: Ստալինգրադյան ճակատամարտի փայլուն հաղթանակը արմատական բեկման սկիզբը դրեց հայրենական պատերազմում: Գերմանա-ֆաշիստական զորքերի պարտությունը սթափեցրեց թուրքերին, որոնք անմիջապես սահմանից հետ քաշեցին իրենց դիվիզիաները, իսկ պատերազմի վերջում էլ պատերազմ հայտարարեցին Գերմանիային: Ստալինգրադի ճակատամարտից հետո ճապոնիան նույնպես հրաժարվեց պատերազմի մեջ մտնելուց: Դիվիզիան երկու անգամ արժանացավ Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինի շնորհակալությանը, իսկ 1943 թ. հունիսի 19-ին պարգևատրվեց Լենինի շքանշանով: Ճակատամարտում ռուսներից ու ուկրաինացիներից հետո հայերը թվակազմով գրավում էին երրորդ տեղը<sup>2</sup>: Դիվիզիան այնուհետև Վորոնեժյան ռազմաճակատի 6-րդ գվարդիական բանակի կազմում ակտիվորեն մասնակցեց Հայրենական մեծ պատերազմի հաջորդ վճռական և կարևոր

<sup>1</sup> *Տե՛ս Արутյոնյան Կ., Արмянский народ в великой отечественной войне 1941-1945 гг., 2018, с. 82.*

<sup>2</sup> *Տե՛ս Հարությունյան Կ. Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 233:*

նշանակության ճակատամարտին՝ Կուրսկի ճակատամարտին: Գվարդիականները 1943 թ. հունիսի 5-ին Բելգորոդ աղեղի հարավային մասում հակառակորդին հասցրեց կենդանի ուժի և տեխնիկայի զգալի վնաս: Կուրսկի հաղթական ճակատամարտից հետո 51-րդ դիվիզիան կռվում էր Կալինինի մարզի մի քանի շրջանների ազատագրման համար<sup>1</sup>: 1944 թ. հունիսի 23-ից մինչև հուլիսի 4-ը 51-րդ դիվիզիան բանակի գեներալ Յուրիանսես Բադրամյանի գլխավորած առաջին Մերձբալթյան ռազմաճակատի 6րդ գվարդիական բանակի կազմում մասնակցում է Բելոռուսիայի հյուսիսային շրջանների ազատագրմանը: Նրանք անցան 250 կմ, ազատագրեցին Պոլոցկ քաղաքը, որի համար մի քանի գնդեր ստացան «Պոլոցկյան» պատվանունը<sup>2</sup>: Դիվիզիան հատկապես աչքի ընկավ Արևմտյան Դվինյան հաջողությամբ գետանցելու ժամանակ, որի համար դիվիզիայի 15 մարտիկներ արժանացան խորհրդային միության հերոսի կոչման: Վիտեբսկ քաղաքի ազատագրման համար դիվիզիան 1944թ, հուլիսին ստացավ «Վիտեբսկյան» պատվանունը<sup>3</sup>: Այնուհետև դիվիզիան մասնակցեց ֆաշիստական զավթիչները Լատվիայի ու Լիտվայի ազատագրման մարտերին և 1945 թ. մայիսի 9-ը դիմավորեց լիտվական ԽՍՀ Մեծմալի գյուղի շրջանում: Այսպիսով անցնելով ավելի քան 12 հազար կմ մարտական ուղի՝ դիվիզիան ոչնչացրեց թշնամու ավելի քան 50 հազար ֆաշիստական զինվոր ու սպա, գերի վերցրեց 15 հազար մարդ, ազատագրեց 1000-ից ավելի բնակավայր, 6 անգամ արժանացավ գերագույն գլխավոր հրամանատրի շնորհակալությանը: Դիվիզիայի շուրջ 20000 զինվորներ ու սպաներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով, 26 հոգու շնորհվեց խորհրդային միության հերոսի կոչում, իսկ 7-ը դարձան փառքի 3 աստիճանի շքանշանակիրներ<sup>4</sup>: Դիվիզիայի պատվիրակությունը 5 անգամ այցելեց Խորհրդային Հայաստան: Հայ ժողովուրդը իր հերթին միշտ ուշադրության կենտրոնում էր պահում փառապանծ գվարդիականներին նրանց ուղարկելով զանազան նվեր-ծանրոցներ, ոգևորող նամակներ և այլն:

Հայկական ազգային դիվիզիաների մեջ իր ուրույն տեղն ունի 390-րդ հրաձգային դիվիզիան, որը առաջինը մեկնեց մարտադաշտ: Մյուսների հետ համեմատած նրա մարտական ուղին եղավ շատ ավելի կարճ և իրեն բաժին ընկած ճակատագիրն էլ շատ ավելի դաժան: Դիվիզիան կազմավորվել է 1941 թ. օգոստոսին, Վրաստանի Չուգոդիդի և Փոթի քաղաքներում: 1941 թ. դեկտեմբերի վերջին և 1942 թ. հունվարի սկզբին, երբ խորհրդային զորքերի և ռազմածովային նավատորմի հաջող օպերացիայի շնորհիվ ազատագրվեց Կերչի թերակղզին, 390-րդ դիվիզիան փոխադրվեց Կերչի ռազմաճակատ և մտցվեց 51-րդ բանակի կազմի մեջ: Այստեղ էլ հենց հունվար ամսին, մարտական իրադրության պայմաններում, համալրվելով հայ զինվորներով և սպաներով, այն դարձավ հայկական ազգային դիվիզիա: 1942 թ. մարտին միավորման անձնակազմում հաշվում էր մոտ 10000 մարդ որից 9000-ը հայ<sup>5</sup>:

Կերչի թերակղզում մղված մարտերում, 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան ցուցաբերեց փայլուն մարտական որակներ: Այսպես, 1942 թ. մարտի 20-ին միավորումը արյունահեղ ճակատամարտում կասեցրեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի հարձակումը և ծանր կորուստներ պատճառելով նրան (47 ոչնչացված տանկ)՝ հետ շարտեց: Հետագայում կատաղի մարտերից մեկում, 1942 թ. մարտի 31-ին ստացած մահացու վերքից վախճանվեց (ապրիլի 2) դիվիզիայի խիզախ հրամանատար՝ գնդապետ Սիմոն Չաքյանը<sup>6</sup>:

1942 թ. մայիսի 8-ին հակառակորդը վճռական հարձակման անցավ Կերչի ռազմաճակատում և նույն օրը և եթ ճեղքեց խորհրդային զորքերի պաշտպանությունը: Հետագա տասնօրյակում մղված օրհասական պայքարում թշնամին հասավ լիակատար հաջողության: Խորհրդային զորքերի միայն փոքր մասին հաջողվեց Էվակուացվել Թաման թերակղզի: Խորհրդային շատ այլ զորամավորումների հետ միասին այդ դաժան ճակատամարտում պարտություն կրեց նաև Հայկական 390-րդը: Կերչի թերակղզում և նեղուցի ջրերում զոհվեցին հազարավոր հայ մարտիկներ:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 234:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 235:*

<sup>5</sup> *Տե՛ս Արտյոնյան Կ., Արмянский народ в великой отечественной войне 1941-1945 гг, с. 82.*

<sup>6</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 35:*

Կերչի մայիսյան աղետից հետո հունիսի 14-ին դիվիզիան լուծարվեց: Ողջ մնացածների մի մասը ծովով փոխադրվեց Սևաստոպոլ՝ համալրելու համար քաղաք-ամրոցի պաշտպանների շարքերը, իսկ մյուս մասը մտցվեց այլ միավորումների կազմի մեջ<sup>1</sup>:

1941 թ. օգոստոսին խորհրդային Չայաստանի տարածքում (Երևան, Էջմիածին) կազմավորվեց 408-րդ հրաձգային դիվիզիան (հրամ. գնդ. Պավել Կիցուկ): Սկզբում այն իր ազգային կազմով խառն էր, բայց հետագայում դարձավ հայկական (1942 թ. մարտ)՝ կապված անձնակազմի հայացման հետ: Ռազմաճակատ մեկնելու պահին, զորամիավորման անձնակազմի (11500 մարդ) ավելի քան 97 տոկոսը հայեր էին<sup>2</sup>:

Չայաստանում գտնվելու ժամանակ դիվիզիան մարտական ուսուցման հետ միաժամանակ իրականացնում էր նաև պետական սահմանի պաշտպանությունը՝ Անի կայարանից մինչև Դվին:

1942 թ. սեպտեմբերի 11-13-ին, 408-րդ Չայկական հրաձգային դիվիզիան մեկնեց ռազմաճակատ՝ պաշտպանելու համար Կովկասը հարձակվող գերմանական զորքերից: Այդ ժամանակ արդեն հակառակորդը բավական լայն ճակատով դուրս էր եկել Գլխավոր Կովկասյան լեռնաշղթա և ձգտում էր հաղթահարելով այն՝ ներխուժել Անդրկովկաս: Կովկասի համար մղվող ճակատամարտին մասնակցում էին հայկական ազգային երեք՝ 89, 408 և 409-րդ դիվիզիաները: Նշված միավորումներում և Կովկասյան ռազմաճակատի այլ զորքերում մարտնչում էին ընդհանուր առմամբ 100 հազար հայ մարտիկներ<sup>3</sup>:

408-րդ դիվիզիան երկաթուղով նախ հասցվեց վրացական Փոթի նավահանգիստ, այնուհետև ծովով տեղափոխվեց Տուապսե և Գելենջիկ, որտեղից էլ ռազմերթով հասավ Նովոռոսիյսկ և սեպտեմբերի 18-ին դիրքեր զբաղեցրեց ծովախորշերի ափերին: Սակայն շուտով դիվիզիան տեղափոխվեց Տուապսե-Գելենջիկ ուղղություն:

1942 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին 408-րդ դիվիզիան մասնակցեց նշված շրջանում ընթացող արյունահեղ կռիվներին: Փոփոխական հաջողություններով ընթացող այդ մարտերում հայկական դիվիզիան ջախջախեց ռումիկական 3-րդ լեռնահրաձգային դիվիզիային, իսկ այնուհետև ծանր կորուստներ պատճառելով գերմանական 19-րդ հետևակային դիվիզիային՝ կասեցրեց նրա հարձակումը<sup>4</sup>:

Ցավոք, Տուապսեի համար մղվող այդ անզիջում պայքարում անխուսափելի և մեծ կորուստներ ունեցավ նաև հայկական դիվիզիան: 1942 թ. նոյեմբերին 408-րդ Չայկական հրաձգային դիվիզիան դուրս բերվեց ռեզերվ և վերակազմվեց 7-րդ առանձին հրաձգային բրիգադի: Վերջինս ակտիվորեն մասնակցեց 1943 թ. հունվարի սկզբներին սկսված խորհրդային զորքերի ընդհանուր հակահարձակմանը Չյուսիսային Կովկասում<sup>5</sup>:

1943 թ. մայիսին 7-րդ բրիգադը միացվեց 23-րդ հրաձգային դիվիզիային, որը 47-րդ բանակի կազմում (Տափաստանային ռազմաճակատ) մասնակցեց Կուրսկի ճակատամարտին, այնուհետև կենտրոնական սևահողային մարզերի, Ուկրաինայի, Լեհաստանի ազատագրմանը և պատերազմն ավարտեց Գերմանիայի տարածքում:

409-րդ Չայկական հրաձգային դիվիզիան մարտական առավել երկար և փառավոր ուղի անցած հայկական դիվիզիաներից մեկն է: Այն կազմավորվել է ԶԽՍՅ-ում 1941 թ. հուլիսին՝ Ստեփանավան քաղաքում տեղակայված 45-րդ բանակի կազմում: Սովորական ռազմավարական քննարկի հետ միասին 409-րդ դիվիզիան 1942 թ. սկզբից իրականացնում էր նաև պետական սահմանի պահպանությունը: 1942 թ. փետրվարի 5-ին 409-րդ դիվիզիան վերակազմավորվեց հայկական ազգային դիվիզիայի: Նրա անձնակազմի (13800 մարդ) ավելի քան 97 տոկոսը հայեր էին<sup>6</sup>: 1942 թ. սեպտեմբերի վերջին տեղի ունեցավ դիվիզիայի հրամանատարի փոփոխություն: Դիվիզիայի 1-ին հրամանատար, գնդապետ Արտաշես Վասիլյանը նշանակվեց 89-րդ Չայկական հրաձգային

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 81-82:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 253:*

<sup>4</sup> *Տե՛ս Չարությունյան Կ. Չայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ. էջ 253-254:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 255:*

<sup>6</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 257; Саркисян С., 408-я стрелковая дивизия в битве за Кавказ, Е., 1985, с. 133-134:*

դիվիզիայի հրամանատար: Նրան փոխարինեց գնդապետ Վասիլի Գլադկովը: Հետագայում դիվիզիայի հրամանատարներն են եղել գնդապետ Մ. Դոբրովոլսկին և գվարդիայի գեներալ-մայոր Ե. Գրեչանինը: 1942 թ. դեկտեմբերի 2-ին դիվիզիան Լենինականից (Գյումրի) մեկնեց ռազմաճակատ՝ Մոզդոկ: 1942 թ. հունվարի 3-ին, Հյուսիսային Կովկասում խորհրդային զորքերի հակահարձակման հենց սկզբում, հայկական 409-րդ հարևան միավորումների հետ միասին ազատագրեց նաև Մոզդոկը: Դրանից հետո՝ մեկը մյուսի հետևից ազատագրվեցին Նալչիկը, Գեորգիևսկը, Միներալնիե Վոդին և վերջապես՝ Ստավրոպոլը: Վերջինիս ազատագրումից հետո, դիվիզիան մտցվեց սկզբում 37-րդ. իսկ այնուհետև 9րդ բանակների կազմի մեջ՝ շարունակելով մարտնչել Հյուսիսային Կովկասի ազատագրման համար<sup>1</sup>:

1943 թ. ապրիլին, հանգստի և համալրման համար, 409-րդ դիվիզիան դուրս բերվեց ռեզերվ և տեղափոխվեց Ռոստովի մարզի Միլերովո քաղաքի մոտ ուր և մնաց մինչև հուլիս ամիս: Հուլիսին խարկովի մարզի Չմին քաղաքի մոտ դիվիզիան նորից դուրս եկավ առաջավոր գիծ: Դրանից հետո 1943 թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին 409-րդ ակտիվորեն մասնակցեց Ձախափնյա ՌԻկրահնայի ազատագրմանը: Դիվիզիայի կողմից ազատագրված բնակավայրերի թվում էին այնպիսին նշանավոր քաղաքներ, ինչպես Դնեպրոպետրովսկը և Դնեպրոձերժինսկը: Հոկտեմբերի 20-24-ին զորամիավորումը գետնացեց Դնեպրը իսկ 1943 թ. նոյեմբեր-դեկտեմբերին ազատագրեց Կիտայզորոդ և մի շարք այլ ուկրաինական բնակավայրեր<sup>2</sup>:

1944 թ. հունվարի 8-ին դիվիզիան ակտիվորեն մասնակցեց ուկրաինական Կիրովոգրադ քաղաքի ազատագրմանը, որի համար արժանացավ Կիրովոգրադյան անվանմանը: 1944 թ. հունվար-մարտին միավորումը շարունակեց մասնակցել Աջափնյա ՌԻկրահնայի համար մղվող ազատագրական մարտերին, որի համար պարգևատրվեց Բոգդան Խմելնիցկու 2-րդ աստիճանի շքանշանով<sup>3</sup>:

1944 թ. մարտի վերջին դիվիզիան գետնացեց Դնեստրը և մտավ Սուլժավիա, ուր մեկը մյուսի հետևից ազատագրվեցին մի շարք բնակավայրեր, ջախջախեց թշնամու Յասսի-Քիշնևյան խմբավորումը, գերեվարեց հակառակորդի 2000 զինվոր ու սպա<sup>4</sup>: Մայիսին 409-րդ գետնացելով Պրուտը՝ մտավ Ուկրաինա և խորհրդային շատ այլ զորամիավորումների հետ միասին ձեռնամուխ եղավ իր արտասահմանյան ազատագրական առաքելությանը Եվրոպայում: Օգոստոս-հոկտեմբեր ամիսներին դիվիզիան մասնակցեց Ռումինիայի հյուսիս-արևելյան և հյուսիսային շրջանների ազատագրմանը, իսկ 1944 թ. նոյեմբերին մուտք գործեց Հունգարիա: Յուրաքանչյուր կիլոմետրի համար խորհրդային զորքերը ստիպված էին արյունահեղ մարտեր մղել: Ակտիվորեն մասնակցելով Հունգարիայի համար մղվող մարտերին՝ 1944 թ. նոյեմբեր-դեկտեմբերին հայկական դիվիզիան ջախջախեց թշնամու Բուդապեշտյան խմբավորումը, ազատագրեց մեծ թվով հունգարական բնակավայրեր: Հունգարիայից հետո 1945 թ. գարնանը 409-րդ դիվիզիան մասնակցեց նաև Չոխսուլովակիայի ազատագրմանը: Հատկապես դաժան մարտեր մղվեցին Գրոն գետի գետնացման ժամանակ: 1945 թ. ապրիլի 4-ին ազատագրվեց Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավան<sup>5</sup>: Ի նշանավորումն այդ խոշոր հաղթանակի՝ խորհրդային մի քանի այլ զորամիավորումների հետ միասին հայկական 409-րդին շնորհվեց Բրատիսլավայան անվանումը, որից հետո այն սկսեց կոչվել Կիրովոգրադյան-Բրատիսլավյան:

1945 թ. ապրիլին մասնակցելով Ավստրիայի արևելյան շրջանների ազատագրմանը՝ դիվիզիան նորից հետ բերվեց Չեխոսլովակիա և պատերազմի ավարտը դիմավորեց Պրագայի մատուցներում: Որոշ ժամանակ մնալով Չեխոսլովակիայում՝ դիվիզիան նորից տեղափոխվեց Հունգարիա, որտեղ էլ 1945 թ. հուլիսին լուծարվեց:

Հայրենական Մեծ պատերազմում Կիրովոգրադյան-Բրատիսլավյան 409-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի մարտական գործունեությունը տևեց 1941 թ. դեկտեմբերից մինչև 1945 թ. մայիս՝ Մոզդոկ քաղաքից մինչև Պրագա, որի ընթացքում դիվիզիան անցել է մի քանի հազար

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայկական ազգային պրոմիավորումները 1918-1945 թթ., Էջ 258:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 258-259:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 259:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 260-261:

կիրմետր մարտական ուղի: Հընթացս ոչնչացվել է թշնամու մեծ քանակի տեխնիկա և զինատեսակներ: Գերեվարված ռազմագերիների թիվը կազմել է մոտ 5200 զինվոր և սպա, այդ թվում՝ 3 գեներալ, որպես ռազմավար գրավվել է սպառազինություն և ռազմական հանդերձանք: Դիվիզիայի 1700 զինվորներ և սպաներ պարզևատրվել են մարտական շքանշաններով և մեդալներով<sup>1</sup>:

Հայկական ազգային դիվիզիաների առավել հանրաճանաչը և առավել հարուստ մարտական կենսագրություն ունեցողը 89-րդ Թամանյան դիվիզան էր: Այն կազմավորվել է 1941 թ. դեկտեմբերին Երևանում: Դիվիզիայի առաջին հրամանատարն էր գնդապետ Սիմոն Չաքյանը, որին 1942 թ. մարտին փոխարինեց փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, իսկ գնդապետ Չաքյանը նշանակվեց Կերչի թերակղզում մարտնչող հայկական 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար:

Բազմամսյա և լարված զինավարժանքներից հետո՝ 1942 թ. օգոստոսի 6-ին, 89-րդ դիվիզիան մեկնեց ռազմաճակատ՝ Հյուսիսային Կովկաս: Մեկնման պահին նրա անձնակազմի (մոտ 12000 զինվոր և սպա) ավելի քան 99 տոկոսը բաղկացած էր հայերից:<sup>2</sup>

Հենց այդ օրերին՝ 1942 թ. հուլիսի 25-ին, սկսվել և գնալով թեժանում էր Կովկասի համար մղվող ճակատամարտը: Գերմանական Ա Բանակախումբը (17-րդ դաշտային բանակ և 1-ին տանկային բանակ) կարճ ժամանակամիջոցում հասնելով խոշոր հաջողությունների՝ ձգտում էր Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան շրջանցելով և գրոհանցելով ներխուժել Անդրկովկաս<sup>3</sup>:

Օգոստոսի 11-ին դիվիզիան ամբողջությամբ կենտրոնացվեց Գրոզնու մոտ, իսկ ևս 10 օր հետո դիրքեր զբաղեցրեց քաղաքի արտաքին պաշտպանական շրջագծի աջ թևում՝ Թերեք գետի աջ ափին: Հոկտեմբերի կեսերին զորամիավորումը տեղափոխվեց Մալգոբեկ քաղաքի մատույցներ: Երկու և կես ամիս տևած պաշտպանական ծանր մարտերից հետո՝ 1943 թ. հունվարի 3-ին, հայկական 89-րդը Անդրկովկասյան ռազմաճակատի մյուս զորքերի հետ միասին անցավ հակահարձակման: Հունվար-փետրվարյան հակահարձակողական մարտերի ընթացքում դիվիզիան խորհրդային 58-րդ բանակի կազմում մասնակցեց Մալգոբեկ, Գեսրգիևսկ, Միներալնիե Վոդի, Ստավրոպոլ քաղաքների և մի շարք այլ մեծ ու փոքր բնակավայրերի ազատագրմանը: 89-րդ դիվիզիայի հունվարյան հարձակումը ղեկավարում էր դեռևս 1942 թ. հոկտեմբերին նրա հրամանատար նշանակված գնդապետ Արտաշես Վասիլյանը: Ցավոք, նա զոհվեց փետրվարի 9-10-ի գիշերը Նովոջիրոմիևսկայա բնակավայրի մոտ թշնամու գիշերային տանկային հանկարծակի հարձակման ժամանակ: Գնդապետ Վասիլյանին փոխարինեց մարտական մեծ փորձ ունեցող Նվեր Սաֆարյանը (1943 թ. դեկտեմբերից՝ գեներալ մայոր) որը դիվիզիան ղեկավարեց մինչև պատերազմի ավարտը<sup>4</sup>: 1943 թ. փետրվարի վերջին դիվիզիան դիրքեր զբաղեցրեց Ազովի ծովի հյուսիսային ափին՝ Տազանրոգի ծովածոցի մոտ: Նույն տարվա սեպտեմբերի սկզբին զորամիավորումը նորից բերվեց Հյուսիսկովկասյան ռազմաճակատ և 18-րդ բանակի կազմում դիրքեր զբաղեցրեց Թաման թերակղզում ամրացած հակառակորդի պաշտպանական «Կապույտ գծի» դիմաց Սախարնայա Գուլովկա-Դուլգայա լեռ հատվածում: Սեպտեմբերից 12-ին դիվիզիան մյուս զորքերի հետ միասին հարձակման անցավ և մի քանի օրյա կատաղի մարտերից հետո ճեղքեց «Կապույտ գիծը»: Դուլգայա լեռը գրոհելիս անմահ սխրանքներ գործեցին դիվիզիայի ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և սակրավոր շարքային Ջահան Կարախանյանը, որոնց հետմահու շնորհվեց խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. հոկտեմբերի 3-ին դիվիզիան ազատագրեց Թաման քաղաքը, որի համար Գերագույն գլխավոր հրամանատարության հոկտեմբերի 9-ի հրամանով ստացավ Թամանյան կոչումը<sup>5</sup>:

Թաման թերակղզու ազատագրումից հետո, 1943 թ. նոյեմբերի 21-25-ին հայկական 89-րդ Թամանյան դիվիզիան իրականացրեց դեսանտային արշավանում Կերչ թերակղզում: 1944 թ. ապ-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 262:

<sup>2</sup> Տե՛ս Арутюнян К., *Армянский народ в великой отечественной войне 1941-1945 гг.*, с. 81.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 87:

<sup>4</sup> Տե՛ս Հարությունյան Կ. *Հայկական ազգային պորմիավորումները 1918-1945 թթ.*, էջ 237-238:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 238:



րիլի 8-11-ին Կարմիր բանակն սկսեց Ղրիմի ազատագրման գործողությունը: Հյուսիսից՝ Պերեկոպի պարանոցի կողմից հարձակվում էին 4-րդ ուկրաինական ռազմաճակատի զորքերը, իսկ արևելքից Կերչի թերակղզով՝ առանձին Մերձսևծովյան բանակը: Վերջինիս կազմի մեջ մտնող 89-րդ Թամանյան դիվիզիան, խորհրդային այլ զորամիավորումների հետ միասին, ապրիլի 11-ին ազատագրեց Կերչ քաղաքը, որի համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով: 1944 թ. մայիսի 9-ին Հայկական 89-րդ խորհրդային այլ զորամիավորումների հետ միասին, ազատագրեց Սևծովյան ռազմածովային նավատորմի գլխավոր բազան՝ Սևաստոպոլը: Ընդ որում, դիվիզիան գրոհում էր քաղաքը ամենադժվարին հատվածներից մեկում՝ Գորնայա լեռան դիմաց: Սևաստոպոլի ազատագրման համար դիվիզիայի հինգ մարտիկներ արժանացան խորհրդային Միության հերոսի կոչման, 6000 զինվոր և սպա պարգևատրվեցին մարտական շքանշաններով և մեդալներով, իսկ դիվիզիան՝ Կարմիր դրոշի շքանշանով<sup>1</sup>:

1944 թ. սեպտեմբերին դիվիզիան Ղրիմից տեղափոխվեց Լեհաստան՝ 1-ին Բելոռուսական ռազմաճակատ: Հոկտեմբերին այն կենտրոնացվեց Լյուբլինի մոտ, իսկ դեկտեմբերին՝ Վարշավայից հարավ, Վիսլայի ձախ ափին գտնվող Պուլավիի հենակետում: Մասնակցելով 1945 թ. հունվարի 12-ին Լեհաստանում սկսված խորհրդային զորքերի մեծ հարձակմանը՝ 89-րդ Թամանյան դիվիզիան ազատագրեց լեհական տասնյակ մեծ ու փոքր բնակավայրեր, շրջապատեց և ջախջախեց գերմանական 6000-ոց խմբավորումը<sup>2</sup>:

Հունվարի վերջին ութ դնելով գերմանական տարածք՝ զորամիավորումը 33-րդ բանակի կազմում մասնակցեց մեծ թվով գերմանական բնակավայրերի գրավմանը: Իսկ փետրվարի 7-ին դիվիզիան գրոհանցեց Օդեր գետը և գրավեց նրա արևմտյան ափին գտնվող հենակետը: Փետրվարի 19-ին զորամիավորումը տեղափոխվեց Օդերի Ֆրանկֆուրտի հենակետ: Ուղիղ երկու ամիս ջանքերի գերագույն լարումով պաշտպանելով «Հայկական փոքր հող» անվանումը ստացած Օդերի փոքրիկ հենակետը (3կմ\*1կմ)՝ Հայկական 89-րդը ետ մղեց հակառակորդի 19 կատաղի հակազորի և երկու ընդհանուր հարձակում<sup>3</sup>: 1945 թ. ապրիլի 16-ին խորհրդային մյուս զորքերի հետ հարձակման անցավ նաև 89-րդը: Սկսվեց Հայրենական Մեծ պատերազմի եզրափակիչ՝ իր ծավալներով վիթխարի Բեռլինի գործողությունը: Ապրիլի 22-ին 89-րդ Թամանյան դիվիզիան գրավեց Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը և մասնակցեց Բեռլինի պատմական գրոհին: Ապրիլի 28-ին արդեն զորամիավորումը մարտեր էր մղում գերմանական մայրաքաղաքի փողոցներում: Մի քանի օրյա արյունահեղ մարտերի արդյունքում Հայկական 89-րդը հասավ մինչև քաղաքի կենտրոն և մայիսի 2-ին՝ Բեռլինի կապիտուլյացիայի օրը, Ռայխստագի հարևանությամբ գտնվող Հոլմբուրգիայն այգու երկու հզոր ամրոցներում գերի վերցրեց հակառակորդի ավելի քան 5100 զինվոր և սպա<sup>4</sup>: Նացիստական մայրաքաղաքի գրավման համար դիվիզիան պարգևատրվեց Կոտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով: Այդ նույն շքանշանով պարգևատրվեց նաև դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը:

Բեռլինի գրավումից հետո, 89-րդ Թամանյան դիվիզիան շարժվեց դեպի հարավ-արևմուտք և մայիսի 7-ին Էլբա գետի ափին՝ Վիտենբերգ քաղաքի մոտ, հանդիպեց ամերիկյան զորքերին, որով էլ ավարտեց իր հաղթարշավը Հայրենական Մեծ պատերազմում<sup>5</sup>:

Այսպիսով պատերազմի ընթացքում Հայկական 89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կոտուզովի 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան անցել է մարտական երկար ու փառավոր ուղի՝ Մեծ Կովկասի նախալեռներից (Գրոզնի) մինչև Բեռլին և Էլբա գետ՝ 7250կմ, որից 3640-ը՝ մարտերով: Դիվիզիան ազատագրել է ավելի քան 900 բնակավայր և 300 քաղաք, ոչնչացրել է թշնամու ավելի քան 11 հազար զինվոր և սպա: Դիվիզիայի ավելի քան 12 հազար մարտիկներ պարգևատրվել են մարտական շքանշաններով և մեդալներով:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 239-240:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 240:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 241-242:*

<sup>4</sup> *Տե՛ս Հայաստանի սպազային ախիսիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1007, ց. 1, գ. 12, թ. 6-7:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, գ. 1, գ. 16, թ. 11-12:*

պարգևատրվածների թվում են Խորհրդային Միության ինը հերոսներ և ութ Չինվորական փառքի շքանշանի լրիվ ասպետներ<sup>1</sup>:

Պատերազմից հետո՝ 1945 թ. հունիսի սկզբին, ստացվեց ԽՍՀՄ զինված ուժերի գլխավոր շտաբի հրամանը 89-րդ դիվիզիան կազմացրելու մասին: Դիվիզիայի հրամանատարությունը դիմեց 1-ին Բելոռուսական ռազմաճակատի ռազմական խորհրդին դիվիզիան չկազմացրելու ինդրանքով: Ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Գալաշևի (Չալաջյան) և ՅԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Չարոթյունյանի միջնորդությամբ Ի. Ստալինը բեկանեց այդ հրամանը<sup>2</sup>: 1945 թ. օգոստոսին դիվիզիան վերադարձավ Չայաստան և տեղաբաշխվեց Էջմիածնում, Երևանում, Քանաքեռում և լուծարվեց միայն 1956 թ.: Չետպատերազմյան տարիներին Չայկական 89-րդի հրամանատարներն են եղել մինչև 1946 թ. հունվարը՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը, ապա՝ գեներալ-մայոր Չայկ Մարտիրոսյանը (1946-1951 թթ.), գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս Ասքանազ Կարապետյանը (1951-1952 թթ.) և գեներալ-մայոր Սերգեյ Միանսարովը (1953-1956 թթ.):

Վերոհիշյալ վեց ազգային դիվիզիաներից բացի, պատերազմի նախնական փուլում Չայաստանում կազմավորվել կամ համալրվել են մի շարք այլ դիվիզիաներ, որոնք պաշտոնապես ազգային չլինելով՝ իրենց կազմով իրականաում հայկական էին: Նման դիվիզիաների թիվը ութն էր, դրանք էին 36, 61, 320, 136 (15-րդ գվարդիական), 138 (70-րդ գվարդիական), 151, 236, 406-րդ հրաձգային դիվիզիաները: Այսպես, 320-րդ հրաձգային դիվիզիան համալրվելուց հետո՝ 1942 թ. սեպտեմբերին, ուներ ավելի քան ինը հազար անձնակազմ, որից մոտ ութ հազարը հայեր էին: Նույնպես և 61-րդ հրաձգային դիվիզիան. համալրվելուց հետո՝ 1942 թ. դեկտեմբերին, նրա անձնակազմի 70 տոկոսը հայեր էին: 136-րդ հրաձգային դիվիզիան (հետագայում՝ 15-րդ գվարդիական) 1941 թ., ամռանը համալրվեց հայերով և ռազմաճակատ մեկնելու պահին (1941 թ. օգոստոսի վերջ) իր կազմով հիմնականում հայկական էր (ավելի քան 60 տոկոսը): Չազարավոր վրացահայ զինվորներ ու սպաներ կային Վրաստանում տեղակայված 28-րդ և 39-րդ պահեստի բրիգադներում<sup>3</sup>: Պատերազմի հենց սկզբում բանակին աջակցելու նպատակով Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Խորհրդային Չայաստանում, ստեղծվել է ժողովրդական աշխարհագոր: 1941 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հայկական աշխարհագորն ունեցել է 52 ջոկատ՝ 26 հազար անձնակազմով<sup>4</sup>:

Այսպիսով, հիմնականում հայերով համալրված դիվիզիաների թիվը Կարմիր բանակում հասնում էր 14-ի: Չամենատուրության համար նշենք, որ վրացական ազգային դիվիզիաների թիվը ութն էր, իսկ ադրբեջանական դիվիզիաներինը՝ չորսը<sup>5</sup>:

Առաջին մարտերում իրենց քաջությամբ աչքի ընկան Մերձբայթյան հատուկ զինվորական օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի պետ, գնդապետ Ստեփան Գինոսյանը, նրա տեղակալ, փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, 183-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Սերգեյ Կարապետյանը, 28-րդ տանկային դիվիզիայի 28-րդ հրետանային գնդի շտաբի պետ, մայոր Գևորգ Միրզոյանը և ուրիշներ<sup>6</sup>:

## **ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՃ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՎՃՌՈՐՈՇ ՃԱԿԱՏԱՍԱՐՏԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՇՆՈՐՀՎԱԾ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ**

Պատերազմի առաջին հայ խիզախների թվում անմոռաց սիրանքներ կատարեցին Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը մասնակցած շուրջ 200 հայ ռազմիկներ, որոնցից կեսից ավելին զորակոչվել էր Կապանի շրջանից: Նրանցից 80-ը նախկին ուսուցիչներ էին: Բրեստի սահմանամերձ շրջանը պաշտպանող կարմիր բանակի չորս հրաձգային դիվիզիաների դեմ գերմանացիները նետեցին 10 դիվիզիա, որից չորսը՝ տանկային: Բրեստ քաղաքի միջնաբերդի

<sup>1</sup> Տե՛ս Չարոթյունյան Կ., Չայկական ազգային կորուսվորումները 1918-1945 թթ., Էջ 242-244:

<sup>2</sup> Տե՛ս ՉԱԱ, ֆ. 1, ց. 34, գ. 385, թ. 169:

<sup>3</sup> Տե՛ս Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից (XIX-XX դարեր), Էջ 432:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 420:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 432:

<sup>6</sup> Տե՛ս Արտյոնյան Կ., *Армянский народ в великой отечественной войне 1941-1945 гг.*, с. 50-53.

կայագործը շրջապատման մեջ ընկավ: Կայագործը մայր Պ. Գավրիլովի, գնդի կոմիսար Ե. Ֆոմինի և կոմերիտական բյուրոյի քարտուղար Սամվել Մաթևոսյանի ղեկավարությամբ հայտնվելով թշնամու թիկունքում՝ դիմեց հերոսական պաշտպանության: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը ամրոցի պաշտպանները արիաբար դիմագրավեցին հակառակորդի թվապես մի քանի անգամ գերակշռող ուժերին՝ կաշկանդելով նրանց առաջխաղացումը: Ամրոցի խիզախ պաշտպաններից էին Սամվել Մաթևոսյանը, Սոս Նուրիջանյանը, Վահան Գրիգորյանը, Գուրգեն Խաչատրյանը, Անդրանիկ Մինասյանը, Թավադի Բաղդասարյանը և ուրիշներ<sup>1</sup>: Բրեստի պաշտպանների մեծ մասը զոհվեց, ոմանց հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը, իսկ մյուսները վիրավոր կամ ուժասպառ վիճակում գերվեցին թշնամու կողմից:

Արևմտյան ռազմաճակատում պատերազմի առաջին օրերին իր սխրանքներով աչքի ընկավ 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Զրիստափոր Ալավերդյանը: Նրա միավորումը մեկ շաբաթ շարունակ Բրեստի շրջանում դիմակայում էր հակառակորդի մածաթիվ ուժերին: Մարտերից մեկում գեներալ Ալավերդյանը ծանր վիրավորվեց և գերվեց թշնամու կողմից: Սակայն գերության մեջ բնավ չընկճվեց գեներալի ոգին և նա մերժեց թշնամու առաջարկը ծառայելու հիտլերյան բանակում: Դեռ ավելին, Յամելբուրգի համակոնտրոնացման ճամբարում նա խորհրդային գերիների միջավայրում զբաղվում էր ընդհատակյա աշխատանքով, որը բացահայտվեց, և նա գնդակահարվեց 1942 թ. ապրիլին: Պատերազմի առաջին օրը թշնամու գերագանց ուժերը հետ մղելիս հերոսաբար զոհվեց հեծյալ գնդի հրամանատար փոխգնդապետ Նիկոլայ Պետրոսյանը<sup>2</sup>:

Հայ մարտիկները սխրագործություններով աչքի ընկան նաև Լենինգրադի 900-օրյա անօրինակ հերոսական պաշտպանության ժամանակ (1941 թ. 10 հուլիսից-1944 թ. 9 օգոստոս): Շուրջ 30 հազար հայեր մասնակցեցին Լենինգրադի պաշտպանությանը, որից 10 հազարը զոհվեց Լենինգրադի և մարզի ազատագրման ժամանակ: Լենինգրադի պաշտպանության ժամանակ խիզախությամբ աչքի ընկավ գնդացրային ստորաբաժանման հրամանատար Աշոտ Ղազարյանը, որն արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման<sup>3</sup>:

«Պրավդա» և «Կոմսոմոլսկայա Պրավդա» թերթերը գրեցին 19-ամյա շարքային Համլետ Մաքսապետյանի սխրանքների մասին, որը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով և ստացավ սպայի կոչում:

Լենինգրադի հերոս պաշտպաններից էր Եղեգնաձորի քաղղեկի տեղակալ Արզամ Պետրոսյանը, որի սխրագործության մասին 1941 թ. հուլիսի 20-ին գրեց «Պրավդան»: Կարմիր բանակային համազգեստով ծպտված հիտլերականներին հաջողվեց գերի վերցնել վիրավոր ընկերոջը տեղափոխող Ա. Պետրոսյանին և ենթարկել անլուր տանջանքների. հիտլարականները նրա կրծքին շիկացած հնգաթև աստղ խարանեցին, պոկեցին մազերը, բայց ոչ մի տեղեկություն կորզել չկարողացան: Գնդակահության պահին սեփական գերեզմանը փորելու համար իրեն տրված բահով Պետրոսյանը կարողացավ ոչնչացնել դահիճներին, փախչել ու միանալ իր զորամասին<sup>4</sup>:

Հրետանային մարտկոցի կապավոր Ալեքսանդր Կասպարովը սողալով մոտեցավ թշնամու հեռախոսագծերին և կտրատեց 3 կմ երկարության հեռախոսալար, որի համար պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով:

Սակրավոր Սերգեյ Գրիգորյանը ճարակորեն բարձրացավ յուրայինների դիրքերի վրա կրակ տեղացող գերմանական տանկի աշտարակի վրա և կացնով ոչնչացրեց տանկի անձնակազմին: «Կոմսոմոլսկայա» թերթը Սերգեյ Գրիգորյանին անվանեց «Սասունցի Դավթի կրտսեր եղբայր»:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 23-25:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 25:*

<sup>3</sup> *Տե՛ս Արտյունյան Կ., Սոսոյան Գ., Вклад армянского народа в победу в Великой отечественной войне (1941-1945), Е., 2010, с. 366-368.*

<sup>4</sup> *Տե՛ս Արտյունյան Կ., Участие синов армянского народа в героической обороне Ленинграда, Е., 2011, с. 44-45.*

Լենինգրադի պաշտպանների թվում էր գրոհող օդաչու, մայրո Նելսոն Ստեփանյանը, որն ստացավ փոխգնդապետի կոչում և նշանակվեց գրոհային ավիագնդի հրամանատար<sup>1</sup>: 1942 թ. նրան շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Էրմիտաժի գիտական և մշակութային արժեքները պահպանելու համար Լենինի շքանշանի արժանացավ նրա տնօրենը, ակադեմիկոս Յուլիա Օրբելի: Յերոս լենինգրադցիների մոտ էր հայ թատրոնի մեծերից մեկը՝ աշխարհահռչակ դերասան Վահրամ Փափագյանը, որի կինը՝ Գալինան, թշնամու ռումբի պայթյունից զոհվեց նրա կողքին<sup>2</sup>:

Լենինգրադի համար մղված պաշտպանության հետ անխզելիորեն կապված է 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Բենիամին Գալստյանի անունը, ով զոհվեց 1942 թ. դեկտեմբերին Պուլկովոյի բարձունքում: Ռուս մեծ գրող Նիկոլայ Տիխոնովը, նշելով նրա արժանիքները գրել է. «Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների, Լենինգրադի պաշտպանների անջնջնելի ցուցակը և կհիշենք նրան ընդմիջող՝ որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի»: Այժմ Ս. Պետերբուրգում կա փողոց Բ. Գալստյանի անունով, իսկ քաղաքի Ալեքսանդր Նևսկի մայրավանքի գերեզմանատանը, որտեղ թաղված է անվեհեր գեներալի աճյունը, կանգնեցված է մի համեստ կոթող<sup>3</sup>:

Հազարավոր հայեր ծառայում էին հարավարևմտյան և հարավային ռազմաճակատներում, որտեղ պատերազմի առաջին օրերին իրենց քաջագործություններով աչքի ընկան ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, առաջին կարգի զինվորական բժիշկ Ալեքսանդր Հարությունյանը, հրաձգային գնդի դպրոցի պետ, կապիտան Մաթևոս Մադաթյանը և որիշներ, ովքեր մարտերում ցուցաբերած սխրանքների համար արժանացան Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանների: 1941 թ. հուլիսի 17-ին Սեստրինովկայի շրջանում տեղի ունեցած մարտերում հակառակորդի 30 տանկերից և 40 ավտոմեքենաներից բաղկացած զորայան հետ անհավասար մենամարտում հաղթող դուրս եկավ մարտկոցի հրանոթի հրամանատար, կրտսեր սերժանտ Մուշեղ Բալայանը, որն անձամբ ոչնչացրեց թշնամու 12 տանկ և պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Դա պատերազմի առաջին շրջանի պատմության մեջ աննախադեպ երևույթ էր: Հարավային ռազմաճակատում հայ քաջորդիներից առաջիններից մեկը Լենինի շքանշանի արժանացավ ականանետային մարտկոցի հրամանատար-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը (հետագայում՝ Հայկական բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ)<sup>4</sup>:

Օդեսայի հերոս աշտպաններից էին ծովայիններ Կարլոս Ղուկասյանը, Գևորգ Շատվորյանը, գնդի հրամանատար Լևոն Տատյանը, գումարտակ հրամանատար Ամբիոս Կուրդիկյանը, գնդապետ Հմայակ Մեյրաբյանը:

Եթե պատերազմի առաջին ամիսներին հայ խիզախներն առանձին անհատներ կամ փոքր խմբեր էին, ապա հետագայում նրանց թիվը զգալիորեն բազմապատկվեց: Խորհրդային բանակի տարբեր զորատեսակներում հազարավոր հայ մարտիկներ ու սպաներ աչքի ընկան Մոսկվայի մատուցներում և Լենինգրադի պաշտպանների շարքերում, Ստալինգրադում ու Կուրսկի աղեղում, Ղրիմում ու Կովկասում, Ուկրաինայում ու Բելառուսիայում, Մերձբալթիկայում ու եվրոպական երկրներում: Սակայն հայ ռազմիկների մարտական սխրագործությունների տարեգրությունը մեծապես հարստացավ ազգային զորամիավորումների կազմավորումից հետո, Կերչի ու Կովկասի համար մղված ճակատամարտերում և հետագայում: Մարտերում կատարած սխրանքների համար հայերից առաջինը կառավարական բարձր պարգևի արժանացավ ավագ լեյտենանտ, օդաչու Պատրիկ Գազազյանը: ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հուլիսի 8-ի հրամանագրով նա պարգևատրվեց մարտական «Կարմիր դրոշ» շքանշանով: Սակայն 1941 թ. հոկտեմբերի 19-ին Բոյանսկի և Օրշայի շրջանում հերթական ռմբակոծության ժամանակ նա իր վառվող կործանիչով միտքվեց հակառակորդի ավտոմոբիլային և տանկային շարայան մեջ<sup>5</sup>: Այդ նույն ձևով դեռևս պատերազմի 3-րդ օրը՝ 1941 թ. հունիսի 24-ին, Սարգիս Հայրապետյանն իր

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 25-31:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 109-127:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 46-48:*

<sup>4</sup> *Տե՛ս «Հայրց պատմություն», հատոր IV, գիրք առաջին, Ե., 2010, էջ 546:*

<sup>5</sup> *Տե՛ս Арутюнян К., Армянский народ в великой отечественной войне 1941-1945 гг, с. 23.*

այրվող ինքնաթիռը գիտակցաբար մխրճեց հակառակորդի տանկային շարասյան մեջ՝ կյանքի գնով կատարելով մարտական առաջադրանքը<sup>1</sup>: Հայրենական պատերազմի առաջին շրջանում միայն 1941 թ. հունիսի 22-ից մինչև դեկտեմբերի 31-ը, 58 հայ մարտիկներ կատարած սխրանքների համար պարգևատրվեցին կարմիր դրոշի շքանշաններով<sup>2</sup>:

Պատերազմի առաջին տարում կատարած սխրանքների համար չորս հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հայերից առաջինն այդ բարձր կոչմանն արժանացավ օդաչու Լազար Չափչախյանը, երկրորդը՝ Բալթյան Նավատորմի ռազմաօդային ուժերի օդաչու Նելսոն Ստեփանյանը, երրորդը՝ գումարտակի հրամանատար լեյտենանտ Խաչատուր Մելիքյանը, չորրորդը՝ հրետանային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Սերգեյ Օգանովը: Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա հայկական գյուղի Բերբեր Օբա կոչվող բարձունքում տեղակայված Ս. Օգանովի մորտկոցը, որն ուներ 24 հոգուց բաղկացած անձնակազմ, 1941 թ. նոյեմբերի 17-18-ը անհավասար մարտ մղեց հակառակորդի 50 տանկերի դեմ և ոչնչացրեց դրանցից 30-ը: Խիզախ հրետանավորները զոհվեցին, բայց իրենց կյանքի գնով կատարեցին մարտական առաջադրանքը՝ թույլ չտալով թշնամուն մտնել Դոնի Ռոստով<sup>3</sup>: Հայրենական պատերազմի առաջին օրերին տանկային ճակատամարտում առանձնակի քաջությամբ ու հերոսությամբ աչքի ընկավ 22-րդ մեքենայացված տանկային զորակազմի շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Թամրուչին, ով 1941 թ. հուլիսի 22-ին պարգևատրվեց Վ. Լենինի շքանշանով<sup>4</sup>:

1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը տեղի ունեցած Սմոլենսկի ճակատամարտում մարտիկների ցուցաբերած զանգվածային հերոսության և ռազմական բարձր վարպետության արդյունքում ծնվեց Խորհրդային գվարդիան: Առաջին գվարդիականների թվում էր 395-րդ հրաձգային գնդի հրամանատար մայոր Համազասպ Բաբաջանյանը, որը գվարդիականի պատվավոր կոչման արժանանալու հետ մեկտեղ պարգևատրվեց «Կարմիր դրոշ» շքանշանով: Դա ապագա ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի առջին մարտական պարգևն էր<sup>5</sup>: Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին իր ռազմավարական ունակություններով ու խիզախությամբ աչքի ընկավ ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի առաջին տեղակալ, Գլխավոր ծովային շտաբի պետ ծովակալ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան): Իսակովը զբաղվում էր Լենինգրադի հրետանային պաշտպանության ամրապնդման գործերով: Հետագայում նրան շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում<sup>6</sup>:

Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի ղեկավարն էր գնդապետ Սերգեյ Խուռյակովը (Արմենակ Խամփերյանց): Դժվարին իրավիճակում նա ղեկավարեց շտաբի աշխատանքը, կապ հաստատեց բոլոր զորամասերի հետ, որի շնորհիվ միայն պատերազմի առաջին օրը Արևմտյան ռազմաճակատի օդաչուները ոչնչացրին հակառակորդի 100 ինքնաթիռ: Հետագայում Խուռյակովին շնորհվեց ավիացիայի մարշալի (առաջին հայ մարշալը) կոչում, և նա նշանակվեց օդային բանակի, ապա ամբողջ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ<sup>7</sup>:

Հայրենական մեծ պատերազմի առաջին մարտերում իրենց խիզախությամբ և մարտավարական հմտությամբ աչքի ընկան Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ գնդապետ Իվան (Հովհաննես) Բաղրամյանը (հետագայում Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս), Նույն ռազմաճակատի հրետանու պետ, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը (հետագայում հրետանու գեներալ-գնդապետ), Հարավային ռազմաճակատի հրետանու պետ գնդապետ Իվան Վեֆլովը, (հետագայում գեներալ-լեյտենանտ), 12-րդ բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Սերգեյ Գալաշևը և շատ ուրիշներ:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 22:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 20:*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 41-42:*

<sup>6</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:*

<sup>7</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 36-39:*

1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942 թ. ապրիլի 20-ը տեղի ունեցած Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի ամենանշանավոր, հեղինակավոր ճակատամարտերից մեկը Մոսկվայի ճակատամարտն էր: Կարմիր բանակը ոչ միայն կասեցրեց գերմանական «Կենտրոն» բանակային զորախմբի առաջխաղացումը Մոսկվայի մատույցներում, այլև հզոր հակահարվածով նրան 100-250 կմ հետ շարտեց դեպի արևմուտք<sup>1</sup>: Այդ հաղթանակը ցրեց գերմանաֆաշիստական բանակների անպարտելիության մասին առասպելները՝ նպաստելով հակահիտլերյան դաշինքի ամրապնդմանը:

Մոսկվայի ճակատամարտին ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների և ԽՍՀՄ ժողովուրդների ներկայացուցիչների հետ մասնակցեցին մի քանի հազար հայորդիներ: Նրանց թվում էին գեներալ-մայոր Հովհաննես Բաղդամյանը, գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը, Իվան Վեբլիովը և ուրիշներ: Մոսկվայի ճակատամարտում կատարած սխրանքներով աչքի ընկան հրետանային գնդի հրամանատար, մայոր Հայկ Ղազարյանը, աշխարհագրայիններ՝ Հովհաննես Ալիբեկյանը, Գրիգոր Կուլոյյանը և ուրիշներ, ովքեր հերոսաբար կռվեցին ու զոհվեցին Մոսկվայի պաշտպանության համար մղվող մարտերում<sup>2</sup>:

Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև դիվիզիայի հրամանատար, փոխգնդապետ Սարգիս Վանեցյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) և 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Հայկ Մարտիրոսյանը, գնդապետ Ստեփան Գինոսյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ) և ուրիշ հրամանատարներ:

Մոսկվայի ճակատամարտում իր գորավարական տաղանդով աչքի ընկավ նաև 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանը: Նրա ղեկավարած դիվիզիան Տուլայի տակ 1941- թ. դեկտեմբերի 5-ից 9-ը ջախջախեց գեներալ Գուդերիանի տանկային դիվիզիան՝ վիժեցնելով Տուլան շրջափակելու հակառակորդի պլանը: Դրա համար նրան շնորհվեց գնդապետի, ավելի ուշ՝ գեներալ-մայորի, ապա գեներալ-լեյտենանտի կոչում: Մոսկվայի ճակատամարտում ցուցաբերած սխրանքների և անձնական խիզախության համար Սարգիս և Հայկ Մարտիրոսյանները պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով<sup>3</sup>:

Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Ստալինգրադի ճակատամարտում (17 հուլիս 1942 թ.-2 փետրվարի 1943 թ.): Հայրենական պատերազմի ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող այդ ճակատամարտում կարմիր բանակը տարավ պատմական խոշոր նշանակություն ունեցող հաղթանակ. գերմանական մի մեծ զորախումբ շրջապատվեց և գլխովին ջախջախվեց: Հակառակորդն այստեղ կորցրեց ավելի քան 1.5 միլիոն մարդ՝ սպանված, վիրավոր և անհայտ կորած, որը կազմում էր խորհրդագերմանական ճակատում մրտնչող ֆաշիստական զորքերի ¼ մասը<sup>4</sup>:

Ստալինգրադի ճակատամարտը վճռական բեկում մտցրեց ինչպես Հայրենական մեծ պատերազմի, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ: Ստալինգրադի ֆաշիստական զորքերի պարտությունը ցնցեց երկրորդ Ռայխի հիմքերը, խարխլեց նրա նկատմամբ իր դաշնակից երկրների վստահությունը, նպաստեց Գերմանիայի կողմից զավթված եվրոպական մի շարք երկրներում դիմադրական շարժման ուժեղացմանը: Ճապոնիան ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել ԽՍՀՄ-ի նկատմամբ ակտիվ գործողությունների դիմելու ծրագրից, իսկ Թուրքիան, որը պատրաստվում էր 1942 թ. նոյեմբերի 24-ին հարձակվել Խորհրդային Միության վրա, հարկադրված եղավ իր 26 դիվիզիաները հետ քաշել Խորհրդային Միության սամաններից: Ստալինգրադի ճակատամարտում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց ավիատեկադրիիայի հրամանատար, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանին, որը օդային մարտերում ոչնչացրեց հակառակորդի 22 ինքնաթիռ: Իր խիզախությամբ աչքի ընկավ գվարդիայի մայոր Մաթևոս Մադաթյանը, որը պարգևատրվեց «Լենինի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 46-48:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 100-101:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 97-99:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 153-156:

շքանշանով»: Նման պարգևի արժանացան նաև տանկային բրիգադի կոմիսար Գրիգոր Գալուստովը, որի Բրիգադը Ստալինգրադի մատուցներում ոչնչացրեց հակառակորդի 218 տանկ<sup>1</sup>:

Ստալինգրադի ճակատամարտին մասնակցեցին շուրջ 30 հազար հայ մարտիկներ: Այդ ճակատամարտին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցեց նախկին Չայկական 76-րդ հրաձգային դիվիզիան, որը մարտերում աչքի ընկնելու համար վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի: Նրա կազմում իրենց սխրագործություններով աչքի ընկան բազմաթիվ հայորդիներ: Ստալինգրադի ճակատամարտում աչքի ընկան քաղվարչության պետ, գեներալ-մայոր Սերգեյ-Գալաշևը, հրետանու պետ, գեներալ-մայոր Իվան Վեքիլովը, 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ, գեներալ-մայոր Չայկ Թումանյանը, 60-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար փոխգնդապետ Ասքանազ Կարապետյանը (հետագայում գեներալ-մայոր, խորհրդային Միության հերոս), Ստեփան և Վլադիմիր Միկոյան եղբայրները, հետախույզ Սուրեն Միրզոյանը, սակրավոր Սուրեն Ավետիսյանը և բազմաթիվ ուրիշներ<sup>2</sup>: Կալաչ գրոհող խորհրդային զորամասերի մեջ էր նաև գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի ղեկավարած մոտոմեքենայացված բրիգադը, որը Նույնպես արժանացավ գվարդիական ու ստալինգրադյան կոչումների: Իրենց հիանալիորեն դրսևորեցին նաև ռազմաօդային ուժերի կապի պետ, գնդապետ Անուշավան Ստեփանյանը, գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը, Միիրան Բոստանջյանը, Արտաշես Չարությունյանը, Արամայիս Պողոսյանը, Կոստանդին Նազարովը, Խաչիկ Բաղդասարյանը, Արամ Միրզոյանը և ուրիշներ: Այդ ահեղ գոտեմարտում իրենց զոհեցին բազմաթիվ հայորդիներ, որոնցից մեկի՝ ավագ լեյտենանտ Արտաշես Գիմորյանի՝ արկի բեկորներից այրված կուսակցական տոմսն արյունաշաղախ վերնաշապիկի հետ այժմ պահվում է Մոսկվայում՝ խորհրդային բանակի կենտրոնական թանգարանում որպես հերոսության մի սուրբ մասունք<sup>3</sup>:

Չայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև Չայրենական մեծ պատերազմի մյուս՝ նշանավոր Կուրսկի ճամատամարտին, որը տեղի ունեցավ 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը: Կուրսկի ճակատամարտում կարմիր բանակը ոչ միայն ամբողջովին ջախջախեց հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից բաղկացած զորախմբավորումը, այլև ընդմիշտ թաղեց գեբելսյան ստահոգ քարոզչության սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են միայն հաղթելու ձմեռային պայմաններում: Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը. գերմանական բանակը ստիպված էր ամբողջ ճակատով անցնել պաշտպանության: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում ցուցաբերած հերոսությունների համար հայ ժողովրդի զավակներից շատերը արժանացան կառավարական բազմապիսի պարգևների: Մարտերում իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած գնդապետ Գրիգոր Գալուստովին և լեյտենանտ Վլադիմիր Իոնիսյանին հետմահու շնորհվեց խորհրդային Միության հերոսի կոչում<sup>4</sup>: Սովորովի առաջին աստիճանի զորավարական բարձրագույն շքանշանով պարգևատրվեց 11-րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Յովհաննես Բաղդամյանը, որին շնորհվեց նաև գեներալ-գնդապետի կոչում: Նման պարգևի և ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ Արմենակ Խամփեյանցը<sup>5</sup>:

Կարելի է առանձնացնել օդաչու, ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանի անձնագրի սխրանքը: 1943 թ. օգոստոսի 3-ին Բելգորոդի շրջանում մարտական հերթական առաջադրանքը կատարելիս թշնամու գենիթային-հրետենային կրակից սկսվեց այրվել խիզախ օդաչուի ինքնաթիռը: Անվեհեր հայորդին չօգտվեց պարաշյուտից և այրվող ինքնաթիռը միտնեց հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների մեջ՝ կյանքի գնով ոչնչացնելով դրանք: Այդ սխրանքի համար Էդվարդ Բունիաթյանը հետմահու արժանացավ Չայրենական պատերազմի

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 157-158:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 170-171:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 158-163:*

<sup>4</sup> *Տե՛ս Արտյոնյան Կ., Կարգույն սինոս արմանկոցո ոարոն Ե Կուրկոյն Ե Երմե, Ե., 2014, Ե. 109-111:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 112-113:*

առաջին աստիճանի շքանշանի: Մինչ այդ նա պարգևատրվել էր Կարմիր դրոշի ու Կարմիր աստ-  
ղի շքանշաններով<sup>1</sup>:

Դեռևս 1942 թ. ապրիլի 5-ին Հիտլերի կողմից հաստատված թիվ 41 դիրեկտիվում ասված  
էր, որ պետք է «հիմնական ուժերը կենտրոնացնել և արագ կերպով կենսագործել ճեղքումը դեպի  
Կովկաս», տիրանալ նրա ռազմավարական ուղիներին: Գերմանական հրամանատարության  
նպատակն էր խորհրդային բանակին զրկել Կովկասի հումքի հարուստ աղբյուրներից, գրավել  
հացառատ Կուբանը, Բաքվի ու Գրոզնու նավթը, Հայաստանի պղինձը, Վրաստանի մարգանցն  
ու մյուս հարստությունները: Գերմանական գլխավոր շտաբը ձգտում էր ԽՍՀՄ-ի դեմ հանել Թուր-  
քիային և Կովկասի վրայով ճանապարհ բացել դեպի Մերձավոր ու Միջին Արևելք: Այսպիսով՝  
1942 թ. հուլիսի վերջից խորհրդային բանակի հիմնական խնդիրը դարձավ Ստալինգրադի ու  
Կովկասի պաշտպանությունը: Ավելի քան 100 000 հայորդիներ մասնակցեցին Կովկասի համար  
մղվող մարտերին, որոնք սկսվեցին 1942 թ. հուլիսի 27-ին և ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի  
9-ին: Նրանց զգալի մասը մարտնչեց Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիանե-  
րի շարքերում<sup>2</sup>: Կովկասի պաշտպանության մարտում ցուցաբերած խիզախության համար  
խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց ավիաեսկադրիլիայի հրամանատար կապիտան  
Սամսոն Մկրտումյանին և հրաձգային բրիգադի գումարտակի հրամանատար, ավագ-լեյտե-  
նանտ Ղուկաս Մադոյանին<sup>3</sup>: Հետմահու այդ կոչմանն արժանացավ Սևծովյան նավատորմի ռազ-  
մաօդային ուժերի 11-րդ ավիազնոյի օդաչու գվարդիայի լեյտենանտ, Սուրեն Տաշչևը (Թաշչյան),  
ով Նովոռոսիյսկի մոտ օդային մարտում ոչնչացրել էր թշնամու յոթ ինքնաթիռներ արժանացել  
կարմիր դրոշի և կարմիր աստղի շքանշանների<sup>4</sup>:

1942 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր Սևծովյան նավատորմի և Կովկասյան ռազմաճակա-  
տի զորքերի գործողությունները փոխհամաձայնեցնում էր ռազմաճակատի հրամանատարի տե-  
ղակալ և ռազմական խորհրդի անդամ նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը: Հոկտեմբե-  
րին 4-ին Տուևսի շրջանում նա ծանր վիրավորվում է և զրկվում ձախ ոտքից, բայց կազդուր-  
վելուց հետո շարունակում է ծառայությունը գործող բանակում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նա-  
խագահության 1942 թ. դեկտեմբերի 13-ի հրամանագրով ծովակալ Իսակովը պարգևատրվում  
է «Լենինի շքանշանով»<sup>5</sup>: Կովկասի հերոսամարտի շրջանում հայ ժողովուրդը 1943 թ. փետրվա-  
րին հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամա-  
կի տակ ստորագրել էին 335 316 մարդ: Այն վառ կերպով արտահայտվում էր հայ ժողովրդի ջերմ  
հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթները<sup>6</sup>: Ժողովուրդն իր  
որդիներին ու դուստրերին կոչ էր անում տուն վերադառնալ հաղթանակով: Նամակը, որ բազմա-  
հազար օրինակներով հրատարակվեց հայերեն և ռուսերեն, տարածվեց ոչ միայն Կովկասյան,  
այլև մյուս բոլոր ռազմաճակատներում, լայն արձագանք գտավ թշնամու դեմ մարտնչող բոլոր հայ  
ռազմիկների սրտերում: Պատասխան նամակում նրանք երդվեցին սուրը պատյանը չդնել մինչև  
լիակատար հաղթանակ:

Կովկասյան ռազմաճակատների զորքերը 1943 թ. հունվարին պաշտպանությունից անցան  
հարձակման և 1943 թ. հոկտեմբերին հաջողությամբ եզրափակեցին այն: Մարտերը խորհրդա-  
յին զորքերի հաղթանակով ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին, երբ գերմանական զորքերը  
վերջնականապես դուրս քշվեցին երկրամասից: Կովկասի պաշտպանության և ազատագրման  
համար ծավալված մարտերում իր կարևոր ավանդը ներդրեց նաև հայ ժողովուրդը: Այդ մարտե-  
րում աչքի ընկավ հատկապես 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ իր հրամանատարներ  
Անդրանիկ Սարգսյանի, Արտաշես Վասիլյանի և Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ: Կովկասի  
համար մղված մարտերում հայ ռազմիկները զանգվածային հերոսություններ կատարեցին՝ ան-

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 139-140:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 105-109:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում:*

<sup>4</sup> *Տե՛ս Արտյոնյան Կ., Արмянский народ в великой отечественной войне 1941-1945 гг, с. 253-254.*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 251-252:*

<sup>6</sup> *Տե՛ս նույն տեղում:*



մահացնելով իրենց անունները, բարձր պահելով մեր ժողովրդի պատիվն ու փառքը: Այսպես, ավագ սերժանտ Յունան Ավետիսյանը 1943 թ. սեպտեմբերին Դուլգայա բարձունքը գրավելու ժամանակ գիտակցորեն գնաց մահվան՝ կրծքով փակելով թշնամու դզօտի գնդացրային հրակնատը և ապահովեց իր ստորաբաժանման առաջանցումը, որի համար հետմահու արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ զինված ուժերի նախարարի հրամանով նրա անունը առհավետ գրանցվեց այն վաշտի անձնակազմի ցուցակում, ուր նա ծառայել էր: Բացի Յ. Ավետիսյանից, նման անձնագրոհություն են կատարել ևս երեք հայ մարտիկներ՝ ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը, ավագ սերժանտ Ապավեն Ռոստոմյանը և գերմանական զբոլությունից փախած ու իտալական պարտիզանական շարժման մեջ ընդգրկված Գևորգ Քոլոզյանը<sup>1</sup>:

Թամանյան թերակղզու ազատագրմամբ վերջնականապես վերացվեց գերմանական զորքերի այն կարևոր հենակետը, որը հնարավորություն էր ընձեռում նրանց իրենց ձեռքում պահելու Դրիմը: Ուստի դրանից հետո օրակարգում դրվեց Դրիմի ազատագրման հարցը, և 1944 թ. մայիսին այն լիովին մաքրվեց ֆաշիստական հորդաներից: Այդ մարտերում ևս աչքի ընկավ Թամանյան դիվիզիան, որի հինգ ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Դրիմի և Կերչի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայորդու և Յայաստանում ծնված մեկ հույնի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում<sup>2</sup>:

Կովկասի և Դրիմի համար ծավալված մարտերից առաջ ու դրանց զուգընթաց Յարավարևմտյան ռազմաճակատի զորքերն իրականացնում էին նաև Ուկրաինայի ազատագրումը: 1943 թ. օգոստոսի վերջերից մինչև 1944 թ. վերջերը Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ ուկրաինական ռազմաճակատների զորքերը գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրեցին Ուկրաինան: Այդ ռազմաճակատների զորքերի կազմում մարտնչել են շուրջ 80 հազար հայ ռազմիկներ: Եթե ավելացնենք նաև 1941-1942 թթ. Ուկրաինայի պաշտպանական ծանր մարտերին մասնակցած հայերի թիվը, որը կազմել է ավելի քան 20 հազար մարդ, ապա Ուկրաինայի համար մարտնչած հայերի թիվն անցնում է 100 հազարից: Նրանցից ավելի քան 30 հազարը զոհվել է մարտերում<sup>3</sup>: Ուկրաինայի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցած հայազգի զեներալներից էին՝ զեներալ-մայոր (հետագայում զեներալ-լեյտենանտ) Յայկ Թումանյանը, զեներալ-մայոր Նիկոլայ Յովհաննիսյանը, զեներալ-մայոր (հետագայում զեներալ-լեյտենանտ), Գևորգ Տեր-Գասպարյանը, զեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խամփերյանցը և ուրիշներ: Դնեստր գետի հաղթահարման ժամանակ 1-ին տանկային բանակի 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ գնդապետ (հետագայում զեներալ-լեյտենանտ) Յամագասպ Բաբաջանյանը<sup>4</sup>:

Այդ մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 21 հայ խիզախների շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում Կիև մտան 50-րդ հրաձգային կորուստի զորամասերը. կորպուսի հրամանատարն էր զեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, որն արժանացավ «Լենինի շքանշանի»:

Գեներալներ Սարգիս Մարտիրոսյանի և Անդրանիկ Ղազարյանի հրամանատարությամբ գործող միավորումները առաջինների թվում անցան Դնեստր, մասնակցեցին Կիևի և այլ քաղաքների ու մարզերի ազատագրմանը: Դնեստրի անցման համար մոտ 2000 ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, որից 18-ը հայեր էին<sup>5</sup>:

50 հազար հայ ռազմիկներ մասնակցեցին Բելառուսիայի ազատագրմանը, որոնցից 15 հազարը զոհվեց մարտերում: Նրանցից շատերը սխրանքների համար պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 հայորդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման<sup>6</sup>:

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 254-255:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 253:*

<sup>3</sup> *Տե՛ս Арутюнян К, Погосян Г., նշվ. աշխ., էջ 282:*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 258-260:*

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 257:*

<sup>6</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 283:*

Նրանց թվում էր Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Յովհաննես Բաղրամյանը: Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկնելու համար «Վիտեբսկյան» անվանում շնորհվեց 51-րդ զվարդիական (Նախկին Յայկական 76-րդ) հրաձգային դիվիզիային: Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկան տասնյակ հազարավոր հայ մարտիկներ, այդ թվում՝ գեներալներ Իվան Վեբիլովը, Սերգեյ Գալաջևը, Ստեփան Գինոսյանը, Իսահակ Գասպարյանը, Բագրատ Առուշանյանը, Յոսիպ Սիմոնյանը, Կարապետ Յախնազարյանը, Խաչիկ Յամբարյանը, Արսեն Բոշնադյանը, բժշկական ծառայության պետ գեներալ-մայոր Ավետիք Բուռնազյանը և ուրիշներ<sup>1</sup>: Օդային մարտերում աչքի ընկան Խորհրդային Միության ապագա հերոսներ օդաչուներ Վազգեն Օգանեզովը, Մարտիրոս Նազուկյանը, Աշոտ Գասպարովը, Յակոբ Մանուկյանը և ուրիշներ: 1943 թ. Նոյեմբերի 1-ին Գոմել քաղաքի օդային մարտում զոհվեց ԽՍՀ Կերոս, մայոր Սամսոն Մկրտումյանը<sup>2</sup>:

Բազմաթիվ հայորդիներ ակտիվորեն մասնակցել են նաև Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների, Կարելիայի, Խորհրդային Անդրբլենոյի համար մղված մարտերին: Լենինգրադի և Մերձբալթիկայի համար մղված կռիվներում հերոսաբար զոհվեց Խորհրդային Միության հերոս, գրոհային ավիացիոն հրամանատար, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում<sup>3</sup>:

Մերձբալթիկայի ու Բելառուսիայի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղված մարտերում կրկին աչքի ընկավ ականավոր զորավար Յովհաննես Բաղրամյանը, որն իրականացրեց մի շարք դժվարին, բայց փայլուն օպերացիաներ: Մերձբալթիկայում աչքի ընկած հայ զորավարներից է նաև զվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը: Նրա ղեկավարած դիվիզիան անձնուրացությամբ ազատագրեց Էստոնիայի Տարտու քաղաքը<sup>4</sup>: Այդ մարտերում վճռականորեն հանդես եկան նաև 51-րդ զվարդիական դիվիզիան և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը կառուցվել էր հիմնականում սփյուռքահայության տրամադրած միջոցներով: Մերձբալթիկայի ազատագրման մարտերում աչքի ընկան գեներալ-մայորներ Յմայակ Բաբայանը, Ստեփան Գինոսյանը, Յայկ Մարտիրոսյանը, Մուշեղ Մինասյանը և ուրիշներ: Վիլնյուսի ուղղությամբ տեղի ունեցած մարտում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ ջոկի հրամանատար, զվարդիայի ավագ Յմայակ Սևոպյանը, իսկ Լատվիայի համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար հետմահու ԽՍՀ Կերոսի կոչում շնորհվեց սերժանտ Վաչագան Վանցյանին<sup>5</sup>:

1944 թ. աշնանը գերմանական օկուպանտները վերջնականապես վճռվեցին Խորհրդային երկրի սահմաններից, և մարտերը փոխադրվեցին Գերմանիայի ու Նրա դաշնակիցների տարածքները: Խորհրդային բանակը ձեռնամուխ եղավ ֆաշիզմի լծի տակ տառապող եվրոպական ժողովուրդներին ազատագրելու իր պատմական առաքելության իրականացմանը, հիտլերյան բանակի ջախջախմանն ու Բեռլինի վրա հաղթանակի դրոշի բարձրացմանը: Այդ մեծագույն պատմական խնդիրները կատարվեցին 1944-1945 թթ. ձմռան և գարնան հարձակողական կամպանիայի ընթացքում: 1945 թ. ապրիլի 30-ին Բեռլինի վրա բարձրացվեց կարմիր դրոշ, իսկ երկու օր հետո գրավվեց Գերմանիայի մայրաքաղաքը: Մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան անվերապահ կապիտուլյացիայի ենթարկվեց: Թշնամուն իր սեփական հողում ջախջախելու համար Խորհրդային բանակի մղած մարտերում նույնպես անձնուրաց մասնակցություն ունեցան հայկական զորամասերն ու հայ ռազմիկները:

Յայ ժողովրդի հազարավոր զավակներ՝ որպես ազատարարներ, անցան եվրոպական մի շարք պետությունների տարածքներով և ազվորեն կատարեցին իրենց սրբազան պարտքը: Պատերազմի հաղթական ավարտի մարտերին մասնակցեցին 200 հազարից ավելի հայորդիներ, որոնցից 32-ին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 290-291:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 289:

<sup>3</sup> Տե՛ս «Նելսոն Ստեփանյան», գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2015, էջ 141-160:

<sup>4</sup> Տե՛ս Арутюнян К., Позосян Г., նշվ. աշխ., էջ 407:

<sup>5</sup> Տե՛ս «Յայոց պատմություն», Յատր IV, գիրք առաջին, էջ 564:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 566:

Ավելի քան 20 հայ գեներալներ իրենց միավորումներով հետապնդեցին ու ջախջախեցին թշնամուն Գերմանիայի և Նրա դաշնակիցների տարածքներում: Բեռլինի գրավմանը ակտիվորեն մասնակցեցին գեներալներ Յ. Բաբաջանյանը, Ս. Կարապետյանը և ուրիշներ: Բեռլինի գրավման համար մղվող մարտերում ցուցաբերած խիզախության համար գեներալ մայոր Յմայակ Բաբաջանին հետմահու շնորհվեց Խորհրդային միության հերոսի կոչում: Նույն կոչմանն արժանացավ նաև գվարդիայի շարքային Սարիբեկ Զիլինգարյանը<sup>1</sup>:

409-րդ Կիրովգրադյան և 89-րդ Թամանյան դիվիզիաները մասնակցեցին ինչպես Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Զարավսլավիայի, այնպես էլ Գերմանիայի, Ռումինիայի, Զուլգարիայի, Ավստրիայի ազատագրմանը: 89-րդ դիվիզիան խորհրդային բանակի միակ զուտ ազգային զորամիավորումն էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը և պատերազմն ավարտեց Էլբայի ափին: Դա մեծ պատիվ էր հայկական դիվիզիայի համար, քանի որ կարմիր բանակի զորամիավորումներից միայն նրան էր պատմական այդպիսի կարևոր առաջադրանք տրվել:

Բեռլինի գրավումը մեծ ցնծություն առաջ բերեց հաղթող զորքերի մեջ: Օդ թռան հազարավոր հրթիռներ, թնդացին հաղթական կրակոցներ և ուռաներ, որոնց ձայնը խլացվեց Ռայխստագի պատերի տակ քոչարի պարողների խրոխտ դոփյունի և զուռնա-դիոլի զիլ նվագի ներքո:

Հազարավոր հայորդիներ մասնակցեցին Ֆաշիզմի լծից Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Զարավսլավիայի, Զուլգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի և Գերմանիայի ազատագրման մարտերին: Միայն Լեհաստանի համար մղված մարտերում ԽՄ հերոսի կոչման արժանացավ 18 հայորդի, իսկ ութ շարքային զինվոր դարձավ «Փառքի շքանշանի լրիվ ասպետ»<sup>2</sup>: 10 հայեր հերոսացան Գերմանիայի ջախջախման և Բեռլինի գրավման մարտերում<sup>3</sup>: Լեհաստանի համար մղված մարտերում աչքի ընկած հրամանատարներից էին 217-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գնդապետ Գրիգոր Գրիգորյանը, 56-րդ բրիգադի հրամանատար, գնդապետ Սամվել Զարուբյունյանը, 4-րդ գվարդիական բրիգադի հրամանատար, գնդապետ Ռաֆայել Զայրապետովը, հրետանային գնդի հրամանատար, գվարդիայի գնդապետ Անդրանիկ Ղահրամանյանը և ուրիշներ<sup>4</sup>: Ռումինիայի ազատագրման մարտերում գործած անձնագրի սխրանքի համար հետմահու խորհրդային միության հերոսի կոչում շնորհվեց տանկային վաշտի հրամանատար, կապիտան Զրանտ Օհանյանցին, ում անունը ԽՍՀՄ պաշտպանության նախարարի հրամանով առհավետ գրանցվեց տանկային գնդի 1-ին վաշտի անձնակազմի ցուցակում:

Զարավսլավիայի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց գնդացրային դասակի հրամանատար, գվարդիայի լեյտենանտ Արամ Սաֆարյանին՝ հետմահու և 237-րդ ավիագնդի ջոկատի հրամանատար, կապիտան Գոգա Աղամիրովին: Բելգրադի ազատագրման մարտերում աչքի ընկած հայորդիներից էին 32-րդ գվարդիայի մեքենայացված բրիգադի շտաբի պետ, գվարդիայի փոխգնդապետ Աշոտ Սարգսյանը, 818-րդ հրետանային գնդի էֆրեյտոր Սոնիկ Սինոյանը, 217-րդ ինժեներային զուամրտակի կապիտան Անդրանիկ Մինասյանը և ուրիշներ<sup>5</sup>:

Զուլգարիայի ազատագրական մարտերում ցուցաբերած խիզախության համար խորհրդային միության հերոսի կոչում շնորհվեց 233-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարի շարային զծով տեղակալ, գվարդիայի փոխգնդապետ Թադևոս Եղիազարյանին (հետմահու) և հրետանային գնդի մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Էդուարդ Այանյանին<sup>6</sup>:

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի ազատագրման մարտերում գործած սխրանքի համար ԽՄ հերոսի կոչման արժանացավ զուամրտակի հրամանատար Գեղամ Փիլոսյանը: Փառքի շքանշանի լրիվ ասպետ դարձավ ականանետային ջոկի հրամանատար, գվարդիայի ավագ սեր-

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում*, էջ 566-567:

<sup>2</sup> *Տե՛ս Арутюнян К., Погосян Г., նշվ. աշխ.*, էջ 409:

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում*, էջ 463:

<sup>4</sup> *Տե՛ս Арутюнян К., Армянский народ в великой отечественной войне 1941-1945 гг.*, с. 537-538.

<sup>5</sup> *Տե՛ս նույն տեղում*, էջ 549, 556, 557, 560:

<sup>6</sup> *Տե՛ս Զարուբյունյան Կ., Հայ ռազմիկները Զուլգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում (1944-1945 թթ.)*, Ե., 1990, էջ 73-96:

ժանտ Գրիգոր Գրիգորյանը: Ավստրիայի մայրաքաղաքի ազատագրմանն ակտիվորեն մասնակցելու համար «Վիեննական» պատվավոր անվանում շնորհվեց 208-րդ և 356-րդ հրաձգային գնդերին, որոնց հրամանատարներն էին գվարդիայի փոխգնդապետներ Վ. Կարապետյանն ու Դ. Ավետիսյանը<sup>1</sup>: Չեխոսլովակիայի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար հերոսի կոչման արժանացած մյուս հայորդին 71-րդ հրաձգային գնդի հրամանատար, գվարդիայի փոխգնդապետ (հետագայում՝ գեներալ-մայոր) Գրիգոր Բաղյանն էր<sup>2</sup>:

Չեխոսլովակիայի ազատագրման մարտերում իրենց կյանքը զոհեցին բազմաթիվ հայորդիներ՝ մայորներ Սամվել Զոչարյանը, Անդրանիկ Սարգսյանը, կապիտաններ Գևորգ Կյուլբեկյանը, Սերգեյ Թևոստվը, Գևորգ Ջուլվելիկյանը և ուրիշներ<sup>3</sup>:

Չեխոսլովակիայի ազատագրության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունը, որի զորքերը առաջինների թվում 1945 թ. մայիսի 9-ին մտան Պրահա: Կորպուսի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար Սարգիս Մարտիրոսյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում<sup>4</sup>:

Մայիսի 9-ին ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Պատերազմում ԽՍՀՄ-ի հաղթանակի ավարտական ստուգատեսը հանդիսացավ 1945 թ. հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում կայացած զորահանդեսը, որին մասնակցել է 150 հայորդի:

### ՀԱՅ ՊԱՐՏԻՉԱՆՆԵՐԸ ԹՇՆԱՍՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Խորհրդային բանակի 1943-1944 թթ. վճռական հաղթանակների մեջ իրենց ավանդն ունեցան Նաև օկուպացված Ղրիմի, Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի, Բելառուսիայի, Լենինգրադի մարզի, Մերձբալթիկայի և այլ շրջաններում թշնամու խոր թիկունքում գործած պարտիզանները, որոնց շարքերում ևս աչքի ընկան հարյուրավոր հայեր՝ իրենց ինքնուրույն պարտիզանական ջոկատներով: Միայն Ուկրաինայում և Բելառուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում ավելի քան 1000, Հոլանդիայում՝ շուրջ 800 պարտիզաններ<sup>5</sup>: Գոյություն ունեին պարտիզանական մի քանի ջոկատներ, նույնիսկ գունդ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից: Օրինակ՝ Ուկրաինայում գերմանական զավթիչների դեմ մարտնչել է 100 հոգուց բաղկացած «Հաղթական» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի հրամանատարությամբ և 250 հայերից բաղկացած Անաստաս Միկոյանի անվան ջոկատը՝ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ: 80 հայերից էր բաղկացած Լենինգրադի և Կալինինի մարզերում գործող պարտիզանական 41-րդ ջոկատը՝ Արտեմ Սաղումյանի գլխավորությամբ: Ղրիմում է մարտնչել 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանում՝ Ստեփան Շահումյանի անվան ջոկատը՝ Անդրանիկ Մալխասյանի հրամանատարությամբ: Ֆրանսիայում է գործել խորհրդային առաջին պարտիզանական ջոկատը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ: Գնդի անձնակազմը բաղկացած էր 2000 հոգուց, որից հայեր էին 1200-ը: Հունաստանում գործում էր 1000 հայից բաղկացած «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ, Հոլանդիայում՝ 800 հայերից բաղկացած խումբը, ինչպես նաև հոլանդական դիմադրական շարժմանն աջակցող խմբերը<sup>6</sup>: Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին Հենրիկ Չափարյանը, Վահան Գրիգորյանը (Բելառուսիա), քույր ու եղբայր Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդարի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 106-111:

<sup>2</sup> Տե՛ս Հարությունյան Կ., Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում (1944-1945 թթ.), Ե., 1983, էջ 16-31:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 36-41:

<sup>4</sup> Տե՛ս Арутюнян К., Погосян Г., նշվ. աշխ., էջ 452:

<sup>5</sup> Տե՛ս Арутюнян К., Участие синев армянского народа в Курской битве, Е., 2014, с. 28-30.

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 623-624:

անդամներ Գեորգի (Ժորա) Չարությունյանը և Մայա Փեղիվանյանը (Ուկրաինա), Արտյոմ Պետրոսյանը (Զեխուսլովակիա), Գևորգ Քոլոզյանը և Մկրտիչ Դաշտոյանը (Իտալիա), Բարթոլոմեոսյանը և Լևոն Տիտանյանը (Ֆրանսիա), Անդրանիկ Միրզոյանը (Հոլանդիա), Արարատ Նավոյանը (Լեհաստան) և ուրիշներ<sup>1</sup>:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԵՃ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր արժանի ավանդն ունեցավ Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը: Չնայած ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից անընդհատ ստացվող հարազատների կորուստը գուժող «սև թղթերին»՝ Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն շարունակեցին իրենց գործունեությունը բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, այլև շահագործման հանձնվեցին ևս 30 նորերը, այդ թվում՝ ավիացիոն, ժամացույցների, շարժիչների վերանորոգման, ավտոդողերի և այլն: Պատերազմը շատ լուրջ և բարդ խնդիրներ դրեց հանրապետության արդյունաբերության առաջ: Պետք էր արագորեն յուրացնել մինչ այդ արդյունաբերության մեջ չեղած գեների, կապի միջոցների, տրանսպորտի և ռազմական այլ պարագաների արտադրության տեխնոլոգիան և թողարկումը: Անհրաժեշտ էր անևախընթաց չափով ընդլայնել պաշտպանական արդյունաբերության համար ռազմավարական հումք և կիսաֆաբրիկատներ, մետաղի ու թեթև արդյունաբերական ապրանքներ արտադրող ձեռնարկությունները՝ լայնորեն օգտագործելով տեղական ռեսուրսները: Անդուլ աշխատանք էր կատարում նաև գյուղի աշխատավորությունը՝ ռազմաճակատին տալով կենսամթերքներ, իսկ արդյունաբերությանը՝ անհրաժեշտ հումք: Ռազմաճակատ մեկնածներին ամենուրեք փոխարինում էին կանայք, պատանիներն ու ծերերը: Արդեն 1941 թ. վերջերին Հայաստանը ռազմաճակատի համար թողարկում էր ավելի քան 140 անուն արտադրանք, որից զինվորական հագուստի և գույքի 53 տեսակի արտադրանք<sup>2</sup>:

Ամբողջ պատերազմի ընթացքում արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակներ՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կառուստիկ սողայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի արտադրությունները և այլն: Զինական արդյունաբերության մեջ ստեղծվեցին նոր ենթաճյուղեր, որոնք հումքի թողարկումից անցան պատրաստի արտադրանք տալուն: Այդ ձեռնարկություններից էր արդտեխնիկա գործարանը, որը 1943 թ. կեսերից սկսեց անվադողերի արտադրությունը<sup>3</sup>: 1945 թ. Ալավերդու ծծմբաթթվի գործարանի հզորությունն հասցվեց տարեկան 15 հազար տոննայի<sup>4</sup>: Արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թվաքանակը հասավ 30-35 հազարի<sup>5</sup>:

1942 թ. հոկտեմբերից Երևանի թիվ 447 գործարանը (հետագայում՝ Հայելեկտրամեքենաշինական) սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանում արտադրվեցին «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր ու շասսի, որոնք ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին տարում թիվ 447 գործարանը սկսեց «ՌՏ-2Ս» ինքնաթիռների սերիական արտադրությունը, որոնք տեղում փորձակվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ<sup>6</sup>:

Կանայք, փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց հարազատներին, ստանձնեցին ծանր ու դժվարին աշխատանք, ձեռք բերեցին նոր մասնագիտություններ, դարձան տրակտո-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 625-627:

<sup>2</sup> Տե՛ս *Советская Армения в годы Великой отечественной войны (1941-1945), сборник документов и материалов*, Е., 1975, с. 327-328.

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ. Ֆ. 1, ց. 24, գ. 3, թ. 106-109:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 23., գ. 30, թ. 140:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 25, գ. 29, թ. 149:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, Ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 8:

րիստներ, կոմբայնավարներ, վարորդներ և այլն: Առանց չափազանցության կարելի է նշել, որ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին հիմնականում կանայք տարան գյուղատնտեսական աշխատանքների ոչ դյուրին բեռը: 1941 թ. հանրապետության գյուղատնտեսության մեջ կանանց տեսակարար կշիռը 36 տոկոսից 1944 թ. բարձրացավ 47 տոկոսի<sup>1</sup>:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալիորեն ավելացան: Հանրապետությունում պատերազմի տարիներին ցանքատարածությունները ընկալվեցին ավելի քան 27 հազար հեկտարով: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը հնարավորություն տվեց հացի ներմուծումը հասցնելու նվազագույն չափերի: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ անասունների գլխաքանակը չնվազեց, նույնիսկ ավելացավ կարմիր բանակի համար նախատեսված մսի ֆոնդը: Գյուղի աշխատավորության խնայողությունների հաշվին կառուցվեցին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը և «Սովետական Հայաստան» զրահագնացքը: Ընդհանրապես պատերազմի տարիներին հորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների խնայողությունների հաշվին ստեղծվեցին նաև «Չանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա», «Սովետական Հայաստան» տանկային շարասյուները, «Սովետական Հայաստան», «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաեակադրիլիաները և այլն<sup>2</sup>: Միայն 1943 թ. գյուղի աշխատավորության ջանքերով երկրի պաշտպանության ֆոնդ մուծվեց 130 հազար փուլ ցորեն, նաև մսամթերքներ և գյուղատնտեսական այլ ապրանքներ, իսկ 1944 թ., գերակատարելով պլանը, Կարմիր բանակի պաշտպանության ֆոնդ մուծվեց 200 հազար փուլ ցորեն<sup>3</sup>:

Ընդհանուր առմամբ, Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում Հայաստանի աշխատավորությունն իր սուղ ու աղքատիկ միջոցներից ԽՍՀՄ պաշտպանության ֆոնդ մուծեց ավելի քան 42 մլն ռուբլի և ի հավելումս՝ Կարմիր բանակի ֆոնդին տրամադրեց 83 մլն ռուբլի: Այդ ամենից բացի, որպես նվեր ռազմաճակատ ուղարկվեց 1 միլիոն 136 հազար միավոր տաք հագուստ, ավելի քան 206 հազար անհատական ծանրոց և 45 վագոն պարենամթերք<sup>4</sup>:

Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին հանրապետության գիտության, կրթության, արվեստի, գրականության, մշակույթի բնագավառների աշխատողները: Հայրենական մեծ պատերազմը նոր խնդիրներ առաջացրեց հանրապետությունում գործող գիտահետազոտական հիմնարկներին: Գիտնականներից պահանջվում էր հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ռազմական պատվերների, երկրի պաշտպանունակության ամրապնդման, ժողովրդի հայրենասիրական ոգին բարձրացնելու վրա: Այս հանգամանքներն ի նկատի ունենալով՝ 1941 թ. նոյեմբերին ՀԿ(Բ)Կ կենտկոմի պլենումը հանձնարարեց գիտահետազոտական հիմնարկների և ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ղեկավարությանը գիտահետազոտական աշխատանքները վերակառուցել ռազմաճակատի կարիքները բավարարելու ոգով: Երկրաբանության ու քիմիայի ինստիտուտները հանրապետության մի քանի բուհերի՝ (պոլիտեխնիկական, բժշկական և այլն) և գործարանների հետ համատեղ մի շարք գիտահետազոտական ծրագրեր իրականացրին՝ ռազմական արդյունաբերության կարիքների համար:

Հայոց բազմադարյա պատմության մեջ նշանակալից երևույթ էր պատերազմի տարիներին՝ 1943 թ. նոյեմբերին, ԽՍՀՄ կառավարության որոշումով ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրումը, որը մեծապես նպաստեց ռազմական պատվերների կատարմանը: Նրա նախագահ ընտրվեց նշանավոր գիտնական, արևելագետ Հովսեփ Օրբելի: Ականավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանն առաջ քաշեց մուլթ միջավայրում լույսի սփռման նոր տեսությունը, որը կիրառական նշանակություն ուներ ռազմական գործում: Տիեզերական ճառագայթների հետազոտման և կիրառման գործում զգալի էր ֆիզիկոսներ Արտեմ և Աբրահամ Ալիխանյանների

<sup>1</sup> *ՏԵՍ և Советская Армения в годы Великой отечественной войны*, с. 310.

<sup>2</sup> *ՏԵՍ և նույն տեղում*, էջ 311-312:

<sup>3</sup> *ՏԵՍ և Арутюнян К., Участие армянского народа в Великой отечественной войне (1941-1945)*, с. 35-36.

<sup>4</sup> *ՏԵՍ և նույն տեղում*, էջ 36:

ներդրումը<sup>1</sup>: Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում զգալի ավանդ ունեցան ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում ռազմական արդյունաբերության և տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները: Ահա նրանցից մի քանիսի անունները: Անաստաս Միկոյանը եղել է ՀամԿ (բ) Կ Կենտկոմի քաղբյուրոյի և պաշտպանության պետական կոմիտեի անդամ, ԽՍՀՄ կառավարության նախագահի տեղակալ, ղեկավարել է Կարմիր բանակի մատակարարման կազմակերպման գործը, Իվան Թևոսյանը՝ ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, Արտեմ Միկոյանը՝ «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորային բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր, Համո Յոյանը՝ Ն 92 հրետանային գործարանի տնօրեն, Ստեփան Ակոպովը՝ ԽՍՀՄ մեքենաշինության ժողկոմ, Սուրեն Աղաջանովը՝ Ն 21 ավիագործարանի տնօրեն, Պարույր Մաթևոսյանը՝ Ստալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն, Բագրատ Հարությունովը՝ ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ, Լևոն Օրբելին՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, Լենինգրադի Ռազմա-բժշկական ակադեմիայի պետ: Հովսեփ Օրբելին 1946 թ. մասնակցել է Լյուրնբերգի դատավարությանը որպես մեղադրող կողմի վկա և մերկացրել ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները<sup>2</sup>:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին բազում հայրենասկներ աշխատանքներ կատարած, հետագայում խորհրդային Միության միջուկային և ջրածնային գեներալի հիմնադիր Կիրիլ Իվանովիչ Շչուկինը, նույն ինքը Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին, եռակի շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Պատերազմի տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց հայրենասիրական ոգու բարձրացմանը: Հասարակագիտական ինստիտուտներին և բուհերի համապատասխան ամբիոններին հանձնարարվեց պատրաստել հայրենասիրական թեմաներով աշխատություններ, անրադառնալ անցյալի հերոսական էջերին: Այս իմաստով կարևոր նշանակություն ունեցան հայ գրողներից Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Ստեփան Չորյանի «Պապ թագավոր» վեպերը, Ավետիք Իսահակյանի, Նաիրի Չարյանի, Գեղամ Սարյանի և այլ գրողների ստեղծագործությունները, որոնք հայրենասիրություն էին ներարկում ընթերցողի մեջ:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից մինչև նրա հաղթական ավարտը խորհրդային Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, կարմիր բանակի մարտական գիտնական, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար», «Ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, գեներալներ, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենաճանր պահերին և ամենուրեք մշտապես զգում էին թիկունքի աշխատավորության աջակցությունը՝ ստանալով նրանց կյանքական ու բարոյական օգնությունը: Հայ ժողովուրդը մեծ ներդրում ունեցավ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գործում:

Ընդհանուր առմամբ խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 106 հայի, որից 4-ին՝ խորհրդա-ֆիննական պատերազմում, 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին<sup>3</sup>: Հայաստանում ծնված 10 այլազգի քաղաքացու ևս շնորհվել է հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար խորհրդային Միության մարշալ Հ. Բաղդամյանը և զրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Ն. Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի, իսկ 26 հայ ռազմիկներ պարգևատրվել են «Փառքի շքանշանի» բոլոր երեք աստիճաններով՝ դառնալով «Փառքի շքանշանի» լրիվ ասպետներ, որոնց իրավունքները հավասարեցված են խորհրդային Միության հերոսի կոչում ունեցողներին: Առաջինը կարմիր բանակում այդ կոչմանն է արժանացել և 1943 թ. նոյեմբերին պարգևատրվել հայազգի սերժանտ Գևորգ (Ժորա) Իսրայելյանը<sup>4</sup>: Յոթ հայ օդա-

<sup>1</sup> Гарибджанян С., *Наука в Армении в годы великой отечественной войны (1941-1945)*, Е., 2007, с. 10-15.

<sup>2</sup> Տե՛ս Գարիբճանյան Ս., *Լշվ. աշխ.*, էջ 57-61:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 24:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

չուներ դարձել են գաստելոյականներ՝ իրենց վառվող ինքնաթիռները մխրճելով թշնամու ռազմական տեխնիկայի և հետևակային զորքի մեջ: Վեց հայ մարտիկներ իրենց կյանքի գնով կատարել են մարտական առաջադրանքները, որի համար ԽՍՀՄ ՊՆ հրամանով առհավետ գրանցվել են այն զորամասերի անձնակազմերի ցուցակներում, որտեղ նրանք ծառայել են: Հինգ հայ ռազմիկներ դարձել են մատրոսովականներ, իրենց մարմնով փակելով թշնամու կրակակետերը<sup>1</sup>:

Պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառում կատարած ակնառու ծառայությունների համար ութ հայրորդիների շնորհվել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում (Յ. Յոյան, Ա. Միկոյան, Ի. Թևոսյան, Բ. Հարությունով, Ն. Նարինյան, Բ. Սալամբեկով, Ա. Խաչատրյան և Լ. Օրբելի): Պատերազմի մասնակից երեք ականավոր հայ գիտնականների՝ «Միգ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, պրոֆեսոր Սամվել Քոչարյանցին և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին այդ բարձր կոչումը շնորհվել է կրկնակի<sup>2</sup>:

1945 թ. դեկտեմբերի տվյալներով պատերազմին մասնակցել են 68 հայ գեներալ, ավիացիայի մարշալ (Արմենակ Խամփերյանց) և մեկ ծովակալ (Հովհաննես Իսակով): Պատերազմի մասնակից հայ սպաներից 1946-1997 թթ. գեներալի կոչում է շնորհվել ևս 84-ին, ծովակալի կոչում՝ ինը հայի: Բանակի գեներալ Յ. Բաղդամյանին 1955 թ. շնորհվել է Խորհրդային Միության մարշալի կոչում: Նույն թվականին Խորհրդային Միության Նավատորմի ծովակալի կոչում է շնորհվել Յ. Իսակովին: 1975 թ. գրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում է շնորհվել Յ. Բաբաջանյանին, իսկ 1980 թ. ինժեներական զորքերի մարշալի կոչում՝ Սերգեյ Ագանովին: Վերջինս պատերազմի տարիներին վաշտի հրամանատարից հասել էր բանակի ինժեներական զորքերի շտաբի պետի պաշտոնին<sup>3</sup>:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի (Հովհաննես Բաղդամյան), երեքը՝ բանակի (Յ. Բաղդամյան, Ս. Խուռյակով և Մ. Պարսեղով), ութը՝ զորակազմի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ գնդի հրամանատարներ<sup>4</sup>:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդն են ունեցել նաև անտեսանելի ճակատի լեգենդար հետախույզները՝ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովհակիմյանը, գեներալ-մայորներ Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանովը, Վյաչեսլավ Գուրգենովը, Խորհրդային Միության հերոս, գնդապետ Գևորգ Վարդանյանը, նրա կինն ու գործընկերուհին՝ քաջասիրտ հայուհի Գոհար Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց գործած սխրանքները հայտնի պատճառներով դեռևս լիովին չեն լուսաբանվել<sup>5</sup>:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում իրենց հերոսական սխրանքներով անմար փառք վաստակեցին հայ ժողովրդի բազմահազար զավակներ՝ որոշակի ավանդ ներդնելով բաղձալի հաղթանակին հասնելու գործում: Հայ ժողովուրդը գերազանց քննություն հանձնեց թե՛ թիկունքում և թե՛ ռազմաճակատում: Ահա այսպիսին է Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների ներդրման խիստ համառոտ պատկերը, որը երբեք չի խամրի ժամանակի հիշվույթում:

**Эдик Минасян, ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).** В статье представлено активное участие армянского народа в Великой Отечественной войне. Основная часть всех 600 000 участников была

<sup>1</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 25-26:*

<sup>2</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 24-25:*

<sup>3</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 26-27:*

<sup>4</sup> *Տե՛ս նույն տեղում, էջ 27:*

<sup>5</sup> *Տե՛ս Արутյոյան Կ., Սոսոյան Գ., Լիզ. աշխ., էջ 6-8; Очерки истории Российской внешней разведки, т. 4, 1941-1945, М., 2003, с. 324-333.*



концентрирована в шести армянских дивизиях, поэтому особое внимание уделено формированию и боевому пути этих дивизий. На основе богатого фактического материала показано, что армянские бойцы, будь то рядовые солдаты, офицеры или военачальники, присутствовали на всех фронтах, во всех видах сухопутных, воздушных и морских войск. Они боролись с первого дня в Бресте до последнего дня взятия Берлина. Они освобождали города Советского Союза и европейских стран. Армянский народ по праву гордится своими великими сыновьями, такими как Ованес Баграмян, Сергей Худяков (Арменак Ханферянц), Амазасп Бабаджанян, Сергей Оганов, адмирал Ованес Исаков и 64 генерала армии. 106 армян были удостоены звания героя Советского Союза. а маршал Ованес Баграмян и летчик Нельсон Степанян были удостоены звания дважды героя Советского Союза.

В статье рассматриваются также сведения про армян- участников партизанских отрядов и про легендарных разведчиков, таких как генерал- лейтенант Айк Овакимян, генерал-майор Иван Агаянц, герой Советского Союза Геворг Вартанян, его жена Гоар Вартанян и др.

В статье представлен самоотверженный труд работников тыла. В годы войны экономика, а также вся жизнь в Армении была перестроена для поддержки и обеспечения фронта.

**Ключевые слова:** западный фронт, армяне-герои Советского Союза, работники тыла, национальные дивизии, Таманская дивизия, маршалы Советского Союза, адмирал Исаков, дважды герой летчик Нельсон Степанян, партизанское движение, движение Сопrotивления.

**Edik Minasyan, THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).** The article presents the active participation of the Armenian people in the World War II (The Great Patriotic War) basing on factual material. About 600 000 people participated in the war, the vast majority of whom were in 6 Armenian divisions. The analysis of the necessary documents shows that not only the ordinary soldiers but also the officers and commanders took part in all fronts and in all types of troops, in Air-force and the Navy starting from the defence fights in the Brest to the conquest of Berlin. They liberated many cities of the Soviet Union and the European countries. The Armenian people honours and takes a legitimate pride in its great sons such as Marshals Hovannes Baghramyan, Sergey Khudyakov (Armenak Khanperyantz), Hamazasp Babajanyan, Sergey Oganosov, Admiral Hovannes Isakov and 64 Generals of the Army. 106 Armenians and 10 people of other nationalities from Armenia were awarded the title of Hero of the Soviet Union. Marshal Hovannes Baghramyan and pilot Nelson Stepanyan were awarded this title twice. The article also deals with some facts about the Armenians in partisan groups and the legendary secret service men such as lieutenant-general Hayk Hovakimyan, major-general Ivan Aghayantz, Hero of Soviet Union Gevorg Vardanyan and his wife Gohar Vardanyan and others.

The selfless work of the people in the rear is also mentioned. The whole life in the republic was reconstructed to support the needs of the front.

**Key words:** Western Front, Armenian Heroes of the Soviet Union, workers of the rear, national divisions, Tamanian division, Marshals of the Soviet Union, Admiral Isakov, Twice Hero, pilot Nelson Stepanyan, partisan and resistance movements.